№ 242 ՀԻՆԳՇԱԲԹԻ 31 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ

1913

ՔԱՌԱՍՈՒՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՀԻՆԳՇԱԲԹԻ 31 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ № 242

Տարեկան գին 10 րուբլի. կէս տարվանը
և 7 ամսվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Сергіевская ул. № 5.
Tiflis, Rédaction „Mschak"
Խմբագրատան տելեֆոն № 2—53.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզվով

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10—20 կոպ.

Տպարանի տելեֆոն № 67.

ԱՌԵՒՏՐԱ-ԱՐԴԻՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԻՒՆ

„ՌԵԿՏԻՖԻԿԱՏ" („Դ. Զ. ՍԱՐԱՋԵՎ" ֆիրմայի անուան տակ առևտուր անող)

առաջարկում է նոր վաճառքի հանված ՕՂԻ, „ՌԷԿՏԻՖԻԿԱՏ" էտիկէտներով, պատրաստված ՀԱՅԻ ամենալաւ յատկութեան եւ զտված սպիրտից:

(Ե.Տ.Կ) առ.

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է ԱՄԵՆՈՒՐԵՔ

850. 10—6

ԳՐԱԿԱՆ-ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ՍԱԼՈՆԻ
հերթական երեկոյթը, ՈՒՐԲԱԹ, նոյեմբերի 1-ին

ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐԻ

ՅԻՇԱՏԱԿԻՆ Է ՆՈՒԻՐՎՈՒՄ.

ՄՈՒՏՔԸ ՑԱՏՈՒԿ ՀՐԱՒԻՐԱԳՐԵՐՈՎ, որ խնդրվում է Սալօնը մտնելիս կտրօնը յանձնել սպասաւորին։ Կոմիտէի մարդկանց համար (ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ԹԻՎ) մուտքի տոմսը 2 ր., որ պէտք է կանխաւ ստանալ։

առ. (ա. օ.) 31. 3—2

ТОРГОВЫЙ ДОМЪ ИНЖЕНЕРЪ ИВАНЪ АМИРОВЪ и К°
МОСКВА—БАКУ.

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏՈՒՆ ԻՆԺԵՆԵՐ ՅՈՎՀ. ԱՄԻՐԵԱՆ ԵՒ ԸՆԿ
ՄՕՍԿՎԱ—ԲԱԳՈՒ

1) Տալիս է առևտրական հարցերում խորհուրդներ և տեղեկութիւններ։
2) Ուսումնասիրում է Եւրոպական և Ասիական Ռուսաստանի զանազան շրջանների բնական հարստութիւնները, ներկայացնելով մասնագէտների եզրակացութիւնը։
3) Կազմակերպում է նոր ձեռնարկութիւններ և ընդլայնում է գոյութիւն ունեցողները, նիւթական նպաստներ հայթայթելով։
4) Օժանդակում է ակցիոներական ընկերութիւնների կազմակերպման, նրանց կանոնադրութիւնները հաստատութեան ներկայացնում և զետեղում բաց թողած բաժինները։
5) Կատարում է ամեն տեսակ յանձնարարութիւններ. անշարժ գոյքեր առնել, ծախել և շահագործել։
6) Ընդունում է յանձնարարութիւն ամեն տեսակ ապրանք, արտադրութիւն և բերք առնել և ծախել կոմիսիօներական հիմունքներով։
7) Ընդունում է ամեն տեսակ ներկայացուցչութիւն Ռուսաստանի, գլխաւորապէս Կովկասի, Անդրկասպեան երկրի և Պարսկաստանի համար։
8) Կատարում է առևտրական բնութիւն կրող ամեն տեսակ յանձնարարութիւններ կոմիսիօներական հիմունքներով։

Ծանօթութիւն.—Գրագրութիւնը ամեն լեզուներով։ Ունի գործակալութիւններ Ռուսաստանի և արտասահմանի վաճառաշահ կենտրոններում։

Առաջարկութիւններով դիմել՝ Москва, Остоженка, 2-ой Ильинскій пер. с. д. կամ Бак Красноводская с. д. Т./Д. Инженеръ Иванъ Амировъ и К°.

(Կ. Հ.) առ. 881. 6—5

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ

Այսօր, հինգշաբթի, հոկտ. 31-ին
Կը կայանայ յայտնի դասախօս

Լ. Ս. ԿՈԶԼՈՎՍԿԻԻ

ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆԸ

Կարող են ներկայ լինել և աշակերտ-աշակերտուհիներ։

Տոմսակները 50 կ-ից մինչև 20 կոպ.։

Հիւրերը ակումբ մտնելու համար վճարում են 25-ական կոպ.։ 966. 1—1

Առաջնակարգ ցիրկ
ԵՂԲ.
ԵՍԻԿՕՎՍԿԻՆԵՐԻ

Այսօր տեղի կունենայ ըմբշամարտը ղեկավարող Վ. Ի. Կրաչինինի բենեֆիսը։ Խոշոր ներկայացում։ XX դարի ըմբիշների երեկոյթ։ Այսօր կըմբշամարտեն—Պաուլը՝ Պիէրի հետ, Սալի Սուլէյմանը՝ սիրող Վանօ Բօրադանեանի հետ, Մասկան՝ Սէպնիկի հետ, Կ. Մայոր բաձէն՝ նէգր Ցօմ Սայէրի հետ, Բէրնարդը՝ Լուկա Կոպեէվի հետ։ Ըմբշամարտի սկիզբը ճիշդ ժ. 9½-ին, իսկ ներկայացման ասպարէ ժ. 11-ին։

առ. 970. 1—1

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

Ս. ԿԷՕՆՃԵԱՆ

Ընդունում է ատամի և բերանի հիւանդութիւնունեցողներին. պլոմբ, արհեստական ատամներ, ատամի հեռացում, (առանց ցաւի)։

Ընդունելութիւնը՝

Ամեն օր (Առաւօտեան ժ. 9—2-ը
(Երեկոյեան ժ. 4—7-ը

Անկիւն Երաս-Երազովսկայա հրապարակի և Լերմոնտովսկայա փողոցի, № 1.

(Ե.Տ.Կ.) առ. 679. 74—20

ԿՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԵՒ ՎԻՐԱԲՈՒԺԱԿԱՆ

ՄԱՍՆԱՒՈՐ

ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Ռտիշչեվսկայա 13, տելեֆոն 4—21.

Ընդունելութիւն թէ կանացի և թէ ներքին, նոյնպէս և վիրաբուժութեան կարիք ունեցող մնայուն (стаціонаръ) հիւանդների (բացի վարակիչ և հոգեկան հիւանդութիւններից) վարօրք գրվելու պայմանով։

Ընդունելութիւն՝ կանացի հիւանդ. ամեն օր՝ ժ. 11—12 առ., մանկական հիւանդութիւն ունեցողներին երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ օրերը՝ ցեր. ժամը 3—4-ը։

Հիւանդանոցի բժիշկները

Ա. Ա. Յարութինեան
Ն. Ն. Վեսելովզորով
Վ. Ա. Զակրժեվսկի
Ի. Գ. Կալամկարեան
Ա. Ա. Նովիցկիյ
Գ. Ն. Տէր-Ներսէսեան
Ն. Զ. Ումիկեան
Ա. Ր. Փիշէր
Ս. Փ. Տահպարոնեանց

(Ե. Տ.Կ.) առ. 779 100—98

ԲԺԻՇԿ

Ե. ՔԵՐԵՍՏԷՃԵԱՆ

ՆԵՐՔԻՆ և ՋՂԱՅԻՆ հիւանդութիւններ։
(Ստամոքսի, կրծքի, Թոքախտի և արեան պակասութեան)

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ամեն օր (Առաւօտեան ժ. 12—2-ը
(Երեկոյեան ժ. 5—7-ը

Իրաֆսկայա, 3 (Լօրիս-Մելիքօվսկայա փողոցի կողմից)

(Ե.Տ.Կ.) առ. 774. 100—19

ԱԼ. ՔԱԼԱՆԹԱՐԻ ՄԱՀՎԱՆ ԱՌԻԹՈՎ

ԱԼ. ՔԱԼԱՆԹԱՐԻ ԹՈՒՂԱՐԿԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԹԱՂՈՒՄԸ *)

Խօջիվանքի գերեզմանատանը, Գր. Արծրունու շիրմի կողքին պատրաստված բաց գերեզմանի առաջ շինված էր սև շղարշով պատած ամբիօն, ուր բարձրանում էին ճառախօսները և արտասանում իրանց դամբանականը։

Առաջինը խօսեց Ա. Աթանասեան՝ Հայ Գիւղատնտեսական Ընկ., սրա Ալէքսանդրապոլի ճիւղի և «Գիւղատնտես» Թերթի խմբագրութեան կողմից։ Նրա ճառը հետևեալն է.

«Թանգագին նախագահ, ընկեր և գործակից։

«Սրանից ուղիղ 20 տարի առաջ Կայսերական Կովկասեան Գիւղատնտ. Ընկերութեան մէջ, ներկայութեամբ այդ ընկերութեան բազմաթիւ անձանց, արտասանվեց զեմստվօ խօսքը, և այդ ոչ որպէս մի դատարկ խօսք, այլ որպէս մի մեծ գաղափար, որը ուշ թէ շուտ գործ էր դառնալու։ Դրա արտասանողը դու էիր, Թանգագին ընկեր, դու, որ երկար տարիներ աշխատելով ռուսական զեմստվային նահանգներում, տեսել էիր այն բոլորը, ինչ որ անում էին յօգուտ գիւղացի ազգաբնակութեան տեղական զեմստվօները։

«Վերադառնալով հայրենի՝ Կովկաս, մըտնելով հայրենի ժողովրդի մէջ, ուսումնասիրելով նրա տնտեսական ծանր, անօգնական կացութիւնը, դու առաջինը զգացիր այդ մեծ կազմակերպութեան անհրաժեշտութիւնը և, տեսնելով որ դեռ ևս երկար, շատ երկար պէտք է սպասել մինչև որ մեր երկիրը ևս ստանայ այդ կազմակերպութեան իրաւունքը, ինքդ յղացար մի համարձակ միտք՝ մէն-մենակ լինել զեմստվօ, կատարել նրա ֆունկցիաներից շատերը։

«Եւ ահա մենք 30 տարիներից ի վեր տեսնում ենք քեզ ընկած մեր երկրի մի ծայրից միւսը, մի դաշտից միւս սար, արօտ, գիւղ, աւան—քարոզում, սովորեցնում, հրահանգում ես անդադար և քո անսպառ եռանդով ուզում ես մի կերպ բանել ժողովրդական տնտեսական կեանքի բարելաւութեան այդ մեծ բացը։

«Սակայն երկար աշխատանքից յետոյ դու վերջապէս յոգնում ես և համոզվում, որ տասնեակ, հարիւրաւոր անձեր են պէտք այդ մեծ գործի համար և, ցանկանալով հասարակական լայն և հիմնաւոր կազմակերպութիւն տալ քո սիրած գաղափարին, հիմնում ես Հայոց Գիւղատնտեսական Ընկերութիւնը, ժողովելով նրա շուրջը տեղական գործիչների և գիւղատնտեսական մասնագէտների մի նոր, թարմ խմբակ և դրանց հետ միասին, ձեռք-ձեռքի տուած, առաջ ես տանում ժողովրդական ինքնօգնութեան մեծ գործը։

«Սակայն քո այդ նոր ստեղծագործական և կազմակերպչական գործունէութեան ամենաեռանդուն շրջանումն է ահա, որ անսպասելի կերպով վրա է հասնում մահը և քեզ խլում մեր միջից։

«Ճիշդ է, ծանր, չափազանց ծանր է մեզ համար քո կորուստը՝ որպէս ղեկավարի, առաջնորդի. սակայն ճանապարհը արդէն գծված է, գործը սկսված, ուղիները ճիշդ որոշված. ուստի մեզ՝ քո աշխատակիցներիդ, գործակիցներիդ համար մնում է մի բան՝ կրկնապատկված եռանդով, միացեալ ոյժերով առաջ տանել ժողովրդական ծառայութեան պատասխանատու և մեզ համար սիրելի գործը՝ վստահ, որ դրանով մենք կատարում ենք մեր պարտքը դէպի մեր հայրենի երկիրը և հարազատ ժողովուրդը և դրանով լաւագոյն կերպով պահելու ենք քո աւանդներն ու յիշատակը։

«Գնաս բարև, Թանգագին ընկեր, գնա հանգիստ առնելու, և վստահ եղիր, որ քո սկսած գործը չի մեռնի»։

Ապա խօսեց տ. Վ. Մամուլեան Հայոց Դրամատիկական Ընկերութեան կողմից հետևեալը.

«Հայ ժողովրդի կարիքների վաստակաւոր մշակի դագաղի առաջ ողբում է նաև հայ թատրօնը։

«Մայրենի բեմի «Սիրողը» դեռ ծաղիկ հասակից հանդէս է գալիս բեմի վրա, իբրև թատերասէր գաւառներում, ապա իբրև խմբագիր և ռեցենզենտ՝ պաշտպան է հանդիսանում հայ թատրօնի գերագոյն շահերի։

«Հայոց Դրամատիկական Ընկերութեան խորհուրդը ևս միացնում է իր խորին վիշտը, խոնարհվելով նրա աճիւնի առաջ. այն ծառայութիւնների համար, որ նա մատուցել է Ընկերութեան՝ իբրև անդամ, նախագահ, «Սիրող» և պաշտպան հայ բեմի։

«Թող չողբայ ընտանիքը, թող չողբայ հայ հասարակութիւնը. Քալանթարը մեռած չէ, նա կենդանի է և կենդանի կը մնայ իւրաքանչիւր հայի սրտի մէջ։

«Հանգիստ ոսկորներիդ, ազգի արժանաւոր մշակ»։

Դերասան Արմէնեան խօսեց Հայ Դերասանական խմբի կողմից։

Մղիվանի խօսեց Վրաց մէջ Գրագիտութիւն Տարածող Ընկ. կողմից։

Տիկին Սոֆիա Դանիէլ-բէկ, անհատապէս և Ալէքսանդրապոլի ս. Փրկչի դպրոցի կողմից ասաց, հետևեալը.

«Ազնիւ գործիչ, քո թարմ գերեզմանի առաջ մենք խոնարհվում ենք պատկառանքով, սգում, ողբում ենք քո կորուստը, բայց և հպարտ ենք քեզանով։

«Դու, արժանաւոր քաղաքացի, կատարեցիր քո պարտքը հայրենիքիդ առաջ, ծառայեցիր ժողովուրդիդ և արժանի ես նրա երախտագիտութեանը։

«Փշոտ էր ճանապարհդ ու դժուար, բայց դու չը շեղվեցիր, չը դաւաճանեցիր քեզ, տոկուն աշխատանքով հարթեցիր քո ուղին, հաւատարիմ՝ քո բարձր սկզբունքներին։

«Համոզված պասիֆիստ, համերաշխութեան քարոզիչ, խաղաղ առաջադիմութեան էվօլիւցիայի կողմնակից, դու ցանում էիր քո ժողովրդի մէջ բարու և գիտութեան սերմեր, զինում էիր նրան կեանքի կռւում գիտութեան անյաղթ զէնքերով։

«Քո մարմինը անհետացաւ մեր միջից, բայց քո դաւանած գաղափարները մարմնացած քո գործունէութեան մէջ յաւերժ երկրի շահերի՝ կենդանի կը պահեն քո յիշատակը։

«Այսօր մենք եկել ենք քեզ մեծարելու, մեր երախտիքը յայտնելու, եկել ենք վերջին հրաժեշտը տալու։

«Դու կիջնես գերեզման, բայց քո յիշատակը վառ կը մնայ մեր սրտերում, քո օրինակը կոգևորէ, կառաջնորդէ մեզ դէպի բարին, դէպի լաւագոյնը։

«Դու լաւ ապրեցիր. յարգանք քո յիշատակին։

«Ալէքսանդրապոլի ս. Փրկիչ եկեղեցու ծխական հոգաբարձութիւնը տխուր պարտականութիւն է դրել ինձ վրա յայտնել իր խորին վիշտը այդ ծանր կորուստի առիթով և իր որոշումը՝ ս. Փրկչի ծխական դպրոցում մի թոշակաւոր պահել Ալէքսանդր Քալանթարի անունով»։

Հրէից ռաբբի Մարկուսը, հրէայ համայնքի կողմից, ասաց մօտաւորապէս հետևեալը.

«Մեռաւ Ալէքսանդր Քալանթարը։ Ընկաւ երկնակամարից մի աստղ, մթագնեց հայերի երկինքը։ Կորուստն անփոխարինելի է, որովհետև հայ ժողովուրդը շատ աղքատ է այդպիսի հասարակական գործիչներով։ Հայերի վիշտը մեծ է։ Քալանթարը մեռաւ սրտի պայթիւնից, որը աւելի քան լի էր մեծ ցաւով իր ժողովրդի համար։ Այդ սիրտը չը կարողացաւ տանել այդքան մեծ ցաւ, որովհետև չը կար այդ ցաւը բաժանող, չը կար մէկը, որ իր վրա վերցնէր նրա տանջանքների թէկուզ մի մասը։ Մենք ամենքս մեղաւոր ենք նրա մահվան համար, մենք ամենքս մասնակից ենք այդ մահվան. ուստի և մեր պարտականութիւնը կայանում է այժմ ոչ միայն նրա մէջ, թէ թաղենք հանգուցեալի աճիւնը։ Մեր առաջ կայ մեծ, վիթխարի գործ—աշխատել այնպէս, որ Ալէքսանդր Քալանթարը շարունակէ ապրել մեր մէջ. մենք պարտաւոր ենք գոնէ այժմ բաժանել այն վիշտը, որով ցաւում էր հանգուցեալի տանջված սիրտը։ Դրանով մենք յարութիւն կը տանք հանգուցեալին և նա կապրէ մեր մէջ, մեր սրտերի մէջ։ Թիֆլիսի հրէական համայնքի անունից պարտք եմ համարում արտայայտել հայ ազգին խորագոյն ցաւակցութիւն»։

Ապա խօսեց Վասիլեվ՝ սոցալիստների կոմիտէի կողմից։

Հայր Կաղատոսեան խօսեց հայ-կաթոլիկ համայնքի և գերապայծառ Ս. վ. Տէր-Աբրահամեանի կողմից։

Տիկ. Սազարդա - Պօսէրդսկայա խօսեց գիւղատնտես կանանց կողմից։

Մերկվիլաձէն խօսեց մանր առևտրականների ընկերութեան կողմից։

Յովսէփ Տիգրանեան՝ Ալէքսանդրապոլ քաղաքի կողմից։

Յ. Սօլօվեան՝ Աստրախանի մի խումբ հայերի կողմից։

Թամամշեան՝ գիւղատնտես ինստրուկտորների կողմից։

Բժշկապետ Ա. Շխեան՝ Հայոց Ազգագրական Ընկերութեան կողմից։

Յովհ. Խաչատրեան՝ Ռուսաց Կայսերական Աշխարհագրական Ընկերութեան Կովկասի ճիւղի կողմից։

Բ. Մկրտումեան՝ խօսեց իբրև հայ գիւղացի հետևեալը.

«Անմահ վարժապետ, ինձ շատ քիչ բան է մնում աւելացնել այն բոլորին, ինչ որ ասվեց այսօր։

«Մեզանից շատերը տեսել են ահագին մեծութեամբ ընկած ժայռ—սեպացած քար, որի շուրջը քար-տաշող վարպետը՝ չաքուչը ձեռին, ընկած խոր մտածման մէջ՝ պտըտվում է և որոնում, թէ այդ կոպիտ քարի ո՛ր կողմից և ինչպէս սկսէ տաշել, որպէսզի ստացվի այն կռված, տաշված քարը, որ կը ցանկանար տեսնել այդ վարպետ քարտաշը։

«Ահա այդ ժայռ քարի նման էր մեր գիւղացիութիւնը, երբ հանգուցեալ Ալէքսանդր Քալանթարը մտել է հայ գիւղերը։ Եւ նա այդ մասին պատմեց մեզ մի անեկդոտ, երբ ինքը, չը գիտեմ, սակայն, որտեղից, երկաթուղով գալու ժամանակ նկատելով մեզ, Ախտալա կայարանում գտնվող գիւղացիներիս՝ իջաւ վագօնից և մի քանի հարց ու փորձերից յետոյ պատմեց այդ անեկդոտը։

«Անցեալներում, երբ նա և այժմս նոյնպէս հանգուցեալ Սիմէօն Զաւարեանը միասին են եղել գործելիս, գիւղատնտեսները ուզեցել են մտնել մի գիւղացու այգի և առաջին անգամ բժշկական փորձ կատարել, գիւղացին ոչ մի կերպ չի ուզեցել համաձայնվել, որ նրանք այդ փորձը կատարեն։ Նրանք ստիպված են եղել գիւղացուն արբեցնելու, որպէսզի հնար ունենան այդ փորձը կատարելու։

«Եւ իսկապէս արբեցնում են ու բժշկում այգին։

«Այժմ, անմահ Քալանթար, այլևս հարկաւոր չէ այդ գիւղացիներին արբեցնել. նրանք իրանք են աղաչում և խնդրում հասցնել նրանց այդ դեղերը և միջոցները։ Եւ մենք յոյս ունենք, որ այդ միջոցները գիւղացուն կը տան քո պատրաստած սիրելի աշակերտները և աշխատակից-ընկերները։

«Իսկ որ այդ այդպէս է, դա պարզվեց Հայ Գիւղատնտեսական Ընկերութեան վերջին ընդհանուր ժողովում, երբ ժողովը լսելով Ընկերութեան շրջիկ-ինստրուկտորի անցեալ ամառվայ Շնող, Արճիս, Լչկաձոր, Հաղբատ և Կողբ գիւղերում ունեցած գործունէութեան զեկուցումը, համոզվեց, որ անհրաժեշտ է գիւղերում դարձեալ ունենալ շրջիկներ։

«Իսկ դու, անմահ վարժապետ, խոստացար այս հոկտեմբերի 25-ից յետոյ անձամբ գալ մեր գիւղերը, բայց բնութիւնը, որ միշտ թշնամի է գիւղացիութեան, այս դէպքումն էլ թշնամութիւն արեց, և հոկտեմբերի 25-ին չը հասած՝ կտրեց քո սիրտը, վերջ տուեց կեանքիդ»։

Գ. Շէրենց խօսեց Թիֆլիսաբնակ վանեցիների կողմից։

Ժամանակի ուշ լինելու պատճառով մնացած 7 ճառախօսները չը կարողացան խօսել։

Ժամը 5-ին, Ալ. Քալանթարի Թանգագին աճիւնը պարունակող դագաղը իջեցվեց գերեզման և շուտով լցվեց գերեզմանը հողով, ու Ալ. Քալանթարը մարմնով անհետացաւ ընդմիշտ մեր միջից՝ յաւիտենականութեան մէջ հանգստանալու։

ՑԱՒԱԿՑԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ ՈՒՂՂՎԱԾ «ՄՇԱԿԻ» ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Քարվանսարա, 27 հոկտ.

Արտայայտում ենք մեր խորին վիշտը «Մշակի» խմբագրի, ազնիւ մարդու՝ Ալէքսանդր Քալանթարի մահվան առիթով, որը

---

*) Տես «Մշակ» № 140 և 141.

իր ամբողջ կեանքում գործում էր ժողովրդի համար, Արծրունու դրօշակը բարձր բռնած:

Վերին-Ագդանի ուսուցիչներ՝ Մելքիսեդէկեան, Սառա Դաւթեան, Տէր-Յարութիւնեան քահանայ, Դովլաթբէկեան:

—

Մանգլիս, 27 նոյմ.

Խորապէս ողբում ենք անփոխարինելի խմբագիր, հրապարակախօս, հասարակական խոշոր գործիչ, նարոդնիկ Ալէքսանդր Քալանթարի անսպասելի մահը:

Աննա Սիրեկանեան, Աւետ Հասան-Ջալալեան, Զաքար Ումրիկեան, Թաթօ Խուցեան, Վասիլի Դիդգուրաբով, Աւետիս Աղամեան, Արշակ Թումասեան, Գէորգ Մարգարեան, Արտէմ Կոկինօվ, Յովհաննէս Փօղալեան:

—

Պետերբուրգ, 27 նոյմ.

Խորապէս վշտացած ենք հայ յայտնի հասարակական գործչի անակնկալ մահով:

Նիկ. Կարակաշ, Յուլիանէ Սպէնդիարեան, Եւգէնիոս Սպէնդիարեան:

—

Շամախի, 27 նոյմ.

Սաղիանի հասարակութիւնը, անմխիթար ողբալով ժողովրդի հաւատարիմ ղեկավարի և գիւղացիների անփոխարինելի ընկերոջ՝ անմոռանալի Քալանթարի անակնկալ մահը, այսօր կատարեց հոգեհանգիստ Վանքի տաճարում: Հանգիստ ոսկերացդ, մեծ գործիչ:

Շաղլեան քահանայ, ուսուցիչ Աթաբէկեան, գիւղական աւագ Մխիթարեան, հաւատարմատար Վլասեան:

—

Արմաւիր, 27 նոյեմբերի

Այսօր ս. Աստուածածնայ եկեղեցում տեղիս ամբողջ հոգևորականութիւնը կատարեց հանդիսաւոր հոգեհանգիստ հանգուցեալ հասարակական գործիչներ Ա. Քալանթարի, Ս. Զաւարեանի և Կ. Խատիսեանի համար, որոնց անունները անխզելի կապված են իրար նրանց իդէալների միանմանութեամբ: Ներկայ էին հայ դպրոցների անխտիր բոլոր դասատուները, աշակերտութիւնը, հասարակական զանազան խաւերի և ինտելիգենցիայի բազմաթիւ ներկայացուցիչները, բազմաթիւ աղօթողներ: Սեֆէրեան քահանան ոգևորված մի ճառ արտասանեց ժողովրդի բարօրութեան և առաջադիմութեան այդ երեք նշանաւոր գլխաւորների յիշատակին նուիրված:

Հոգևորականութիւնը, ուսուցչութիւնը, աշակերտութիւնը և միւսները յայտնում են իրանց խորին ցաւակցութիւնը հայ ժողովրդի այն արժանաւոր զաւակների ընտանիքներին, որոնք այնպէս շուտ անցան յաւիտենականութեան գիրկը, երբ շուրջը պայքարը եռում է, երբ հասարակութիւնը այնքան սուր կարիք ունի ազնիւ և անվեհեր ղեկավարների:

—

Ալէքսանդրոպոլ, 27 նոյմ.

Այսօր, երբ հողին է յանձնվում անխոնջ հասարակական գործիչ և անմոռանալի հրապարակախօս Քալանթարի թանգագին աճիւնը, կատարելով հանդիսաւոր հոգեհանգիստ՝ միացնում ենք մեր խորին վիշտը ընդհանուր վշտին:

Թող թեթև լինի հողը նրա վրա:

Կարապետ Ափինեան, Երուանդ Տէր-Մինասեան, Աւետիք Տէր-Պօղոսեան, Գրիգոր Տէր-Պօղոսեան, բժիշկ Տէր-Սահակեան, ինժ. Զախմախչեան, Նիկոլայ Կիրակոսեան, Կոստանդին Աթովեան, Գէորգ Խոյեցեան, Սիմէօն Տէր-Գրիգորեան, Նիկողոսեան քահանայ, Կարապետ Իսահակեան, Մնացական Տէր-Մարտիրոսեան, Պարոյր Բաբայեան, Գէորգ Բունիաթեան, Աշոտ Կարինեան, Ղասաբեան, Տէր-Դաւթեանց, Արշակ Յակոբեանց, Շամցեանց, Բեբուրեան, Օքսիւզեան, Զատիկեան, Կարկատեան, Բաստրմաճեան, Բաղրամեանց:

—

Ախալցխա, 27 նոյմ.

Հայ դպրոցների հոգաբարձութիւնը խորին վշտով մասնակցելով ընդհանուր դժբաղդութեանը՝ հասարակական առաջադէմ գործիչներ Զաւարեանի, Քալանթարի և Խատիսեանի մահվան պատճառով՝ իր նիստում յարգեց նրանց յիշատակը յոտնկայս և որոշեց յատկացնել Զաւարեանի և Քալանթարի անուան ֆոնդերին 25-ական ռուբլի:

Նախագահ՝ Արաբեանց

—

Սուխում, 27 նոյմ.

Կ. Հայոց Բարեգ. Ընկ. Սուխումի ճիւղը յայտնում է իր ցաւակցութիւնը՝ մտածող դասի կրած անփոխարինելի կորուստների համար յանձին Քալանթարի, Զաւարեանի և Խատիսեանի:

Նախագահ՝ Նիկ. Աթաբէգեան

—

Մեծ-Ղարաքիլիսա, 27 նոյմ.

Ողբում ենք Քալանթարի մահը:

Դշլաղի ուսուցչութիւն և հոգաբարձութիւն

—

Նոր-Նախիջևան, 27 նոյմ.

Այսօր պատարագից յետոյ, եկեղեցական հոգաբարձութեան նախաձեռնութեամբ Լուսաւորիչ մայր եկեղեցում կատարվեց հոգեհանգիստ անմոռանալի հասարակական գործիչ և ազնիւ հրապարակախօս Քալանթարի համար, ներկայութեամբ քաղաքագլխի, հասարակական ներկայացուցիչների և աղօթողների մեծ բազմութեան:

Նախագահ հոգաբարձութեան՝
Սալթիկեան

—

Եյսկ, 27 նոյմ.

Հայի մռայլ հորիզոնից մի փայլուն աստղ էլ իջաւ. սրտի անհուն կսկիծով ողբում ենք ազգային մեծ կորուստը մեծ մարդու՝ Ալէքսանդր Քալանթարի սգալի մահը:

Զատիկեան, Եզեկեան, Գարագաշեան, Եանողեան

—

Դերբենտ, 27 նոյմ.

Աղօթողների մեծ բազմութեան ներկայութեամբ կատարվեց հոգեհանգիստ անժամանակ մահացող հասարակական գործիչներ Զաւարեանի, Քալանթարի և Խատիսեանի համար: Կորուստը մեծ է. միանում ենք համազգային վշտին:

Հայ հասարակութիւն

—

Ղարասու-Բազար, 27 նոյմ.

Հայ ուսումնարանի հոգաբարձութիւնը և ուսուցչական մարմինը, այլ և Բարեգործական Ընկերութեան վարչութիւնը խորապէս ողբում են հայ հրապարակախօս և գիւղացիութեան բեղմնաւոր գործիչ Ալէքսանդր Քալանթարի մահը:

Մեղնիկեան քահանայ
Ուսուցիչ՝ Տէր-Մովսէսեան

—

Պեատիգորսկ, 27 նոյմ.

Ցնցված, վշտացած՝ լոյսի և ճշմարտութեան գլխաւորներ Ալէքսանդր Քալանթարի և Սիմէօն Զաւարեանի անժամանակ մահվամբ, որոնք իրանց տաղանդի պայծառ շողերով ու անշահասէր սիրով լուսաւորել են մայրենի ժողովրդի կեանքը, սրտի ցաւով խնդրում ենք ընդունել մեր ցաւակցութիւնը. վշտացած ենք հաւասարապէս իրանց ժողովուրդը և մայրենի գրականութիւնը սիրողների հետ:

«Кавказскій Край» թերթի խմբագիր և հրատարակիչ՝

Յարութիւնեան, Սուքիասեան

—

Սկրա, 27 նոյմ.

Աւսարգսեանների այգեգործութեան ներկայացուցիչները յայտնում են խորին ցաւակցութիւն՝ գիւղատնտեսական և գրական գործիչ Ալէքսանդր Քալանթարի անժամանակ մահվան առիթով:

Գրիգոր Աւսարգսեան

—

Ղուբա, 27 նոյմ.

Յաւիտեան ընկաւ շիտակ մարդը, այլ ևս չենք կարդալու Ալէքսանդր Քալանթարի ջերմ յօդուածները: Իբրև երկար տարիների բաժանորդ սիրելի «Մշակի», յայտնում եմ իմ ցաւակցութիւնը խմբագրութեան, ողբալով անգնահատելի խմբագիր Ալէքսանդր Քալանթարի կորուստը:

Միրզա Ամիրջանեան

—

Բիբի-Էյբաթ, 27 նոյմ.

Բիբի-Էյբաթի Կասպիական Ընկերութեան պրոմիսլաների բանւորները ողբում են անփոխարինելի Քալանթարի, Խատիսեանի և Զաւարեանի մահը, որոնք իբր փայլուն աստղեր լուսաւորում էին գիւղացիներին: Երեք աստղերի խաւարումը խոր վիշտ պատճառեց բանւորների սրտին. յայտնում ենք մեր լիակատար ցաւակցութիւնը:

Կարապետ Տէր-Յովհաննիսեան

—

Մոսկվա, 27 նոյմ.

Խնդրում եմ ընդունել իմ ցաւակցութիւնը Ալէքսանդր Քալանթարի անժամանակ մահվան առիթով, որը յանուն հայրենիքի երջանկութեան մարտիկն էր ու գործիչը, ժողովրդին ծառայելու դրօշակը բարձր բռնող:

Աւետիս Տէր-Մկրտչեան

—

Սուխում, 27 նոյմ.

Արտայայտում եմ իմ խորին ցաւակցութիւնը անփոխարինելի Ալէքսանդր Քալանթարի մահվան առիթով:

Տէր-Եղիազարեան

—

Պեատիգորսկ, 27 նոյմ.

Պեատիգորսկի հայ հասարակութիւնը ներկայ եղաւ լուսատու գործիչների՝ «Մշակի» հանգուցեալ խմբագիր Ալէքսանդր Քալանթարի և Սիմէօն Զաւարեանի համար կատարված հոգեհանգստին, վերառաքելով ջերմ աղօթքներ նրանց հոգու անդորրութեան համար:

Հոգաբարձութիւն

—

Շուլավէր, 27 նոյմ.

Բացակայ լինելով այսօր միայն իմացայ հասարակական յայտնի գործիչ Ալ. Քալանթարի անժամանակ մահվան մասին. յայտնում եմ անկեղծ ցաւակցութիւնս խմբագրութեան և ընտանիքին:

Վախտանգ Մեհրաբեան

—

Ղուբա, 27 նոյմ.

Կատարվեց հոգեհանգիստ թանգագին հանգուցեալ Քալանթարի համար:

Բօղդանեան, Սալամբէկեան և Գասպարեան

—

Ղզլար, 27 նոյմ.

Հասարակական գրադարան-ընթերցարանի վարչութիւնը յայտնում է ցաւակցութիւն անփոխարինելի հասարակական գործիչ Ալ. Քալանթարի մահվան առիթով:

Վարչութիւն

—

Նուխի, 27 նոյմ.

Հայ համայնքը կատարելով այսօր հոգեհանգիստ անժամանակ մահացող Ալ. Քալանթարի համար՝ արտայայտում է խորին վիշտ և անկեղծ ցաւ հանգուցեալի խմբագրութեան և ընտանիքին:

—

Արտաօվա, 27 նոյմ.

Սրտի ցաւով իմացայ անմոռանալի, ազնիւ և լաւ մարդու՝ Ալ. Քալանթարի յանկարծակի մահվան մասին: Յայտնում եմ իմ անկեղծ ցաւակցութիւնը հանգուցեալի որբացած ընտանիքին և խմբագրութեան:

Աւագ Հախվերդեան

—

Դուբովկա, 27 նոյմ.

Ընդունեցէք իմ անկեղծ, խորին ցաւակցութեան արտայայտութիւնը՝ խմբագրութեանդ կրած անփոխարինելի կորստի առիթով:

Թոմաս Մարգարեան

—

Թեմիր-խան-Շուրա, 27 նոյմ.

Թեմիր-խան-Շուրայի հայ հասարակութիւնը, կատարելով հոգեհանգիստ անժամանակ վախճանված հասարակական գործիչներ Զաւարեանի, Քալանթարի և Խատիսեանի համար, յայտնում է իր խոր վշտակցութիւնը:

Սարումեան և Ղևոնդ քահ.

—

Քութայիս, 27 նոյմ.

Խորապէս յարգված հասարակական մշակ Ալէքսանդր Քալանթարի թաղման օրը Քութայիսի հայ հասարակութիւնը կատարելով հոգեհանգիստ յայտնում է իր խոր ցաւակցութիւնը ամբողջ հայ ժողովրդի ունեցած կորստի համար:

Հոգաբարձութեան նախագահ՝
Ռաֆայէլեան

—

Թիֆլիս, 30 նոյմ.

Հասարակական անհուն վշտին միացնում եմ և ես սրտիս խոր կսկիծը անզուգական ժողովրդական գործիչ և իմ գրական գործունէութեան մեկենաս Ալէքսանդր Քալանթարի վաղաժամ մահվան առիթով:

Արտէմ (Յարութիւն) Եսայեան

—

Սպահան, 27 նոյմ.

Սգաւոր հայութեան և առանձնապէս «Մշակի» մեծ կորուստի առիթով՝ ի դէմս Քալանթարի՝ յայտնում եմ խորին ցաւակցութիւնս:

Մայիլ Եսայեան

—

Օդեսսա, 27 նոյմ.

Այսօր կատարելով հոգեհանգիստ Քալանթարի համար, անկեղծօրէն ցաւակցում եմ որբացած խմբագրութեան և ընտանիքին:

Զուբարեան քահանայ

ԱԼ. ՔԱԼԱՆԹԱՐԻ ՄԱՀՎԱՆ ԱՐՁԱԳԱՆՔԸ ԳԱՒԱՌՈՒՄ

—

Ալ. Քալանթարի մահվան բօթը ինչպէս Թիֆլիսի, այնպէս և գաւառի հայ հասարակութեան համար աւելի քան յանկարծակի էր:

Այդ գույժի առաջին տպաւորութեան տակ՝ գաւառական համայնքները սկսեցին ցաւակցական հեռագրեր տեղալ Թիֆլիս ինչպէս խմբագրութեանս, այնպէս և հանգուցեալի ընտանիքի հասցէով: Դրանից յետոյ գաւառներում սկսվում է հոգեհանգիստների շարքը հանգուցեալի յիշատակին: Կատարված այդ հոգեհանգիստների նկարագրութիւնները հետզհետէ հասնում են խմբագրութեանս: Բայց մենք, դժբաղդաբար, տեղի սղութեան պատճառով, հնարաւորութիւն չունենք այդ բնաւորութեան թղթակցութիւնները մանրամասնօրէն տպել, ուստի միայն կը յիշատակենք այն վայրերի անունները, ուր Ալ. Քալանթարի յիշատակին կատարվել են հոգեհանգիստներ:

Այսպէս՝ նոյմ. 27-ին, կիրակի, Հին-Նախիջևանի ս. Գէորգ եկեղեցում, պատարագից յետոյ, տեղի է ունեցել հոգեհանգիստ Ալ. Քալանթարի, Ս. Զաւարեանի և Կ. Խատիսեանի յիշատակին: Հոգեհանգստեան կարգը կատարվելուց-վերջանալուց յետոյ՝ տեղական յաջորդ Սիօն վարդապետ խօսել է երեք հանգուցեալների մասին՝ դրուատելով նրանց գործունէութիւնը:

Նոյն օրը Շամախու գաւառի Սաղեան գիւղի Վանքի տաճարում տեղի է ունեցել հոգեհանգիստ, որից յետոյ՝ Բուդաղեան դպրոցի ուսուցիչներից մէկը՝ Յովհ. Բօսեան խօսել է Ալ. Քալանթարի գործունէութեան մասին:

Դարձեալ նոյն օրը Զաքաթալայում տեղական եկեղեցում, պատարագից յետոյ, կատարվել է հոգեհանգիստ, որին ներկայ են եղել, բացի խուռն բազմութիւնից և ծխ. դպրոցի աշակերտութիւնից, նաև ռուս աստիճանաւորներ. խօսվել են ճառեր հանգուցեալի գործունէութեան մասին: Նոյն օրվայ նիստում տեղական ծխ. դպրոցի վարչութիւնը որոշել է, ի յիշատակ Քալանթարի, հանգուցեալի անունով մի սան պահել տեղական ուսումնարանում, իսկ աշակերտները իրանց շրջանում հաւաքել են 3 ր., որպէսզի այդ գումարով բերել տան Ալ. Քալանթարի մեծադիր նկարը՝ դպրոցի սրահում կախելու նպատակով: Բացի աշակերտների հաւաքած գումարից, ինչպէս մեզ հաղորդում են, տեղական հասարակութիւնն էլ իր շրջանում հանգանակութեան է ձեռնարկել Ալ. Քալանթարի յիշատակի յաւերժացման համար:

Թիֆլիսին մօտիկ Ծղնէթ գիւղի հայոց եկեղեցում ևս շաբաթ, նոյմ. 26-ին, տեղական ծխ. դպրոցի աշակերտութեան և ժողովրդի ներկայութեամբ, պատարագից յետոյ, հոգեհանգիստ է կատարել ծխատէր Ստ. քահ. Երամեանը:

Պեատիգորսկի հայ գաղութն ևս նոյմ. 27-ին, ներկայութեամբ հոգաբարձութեան, ուսուցչ. խմբի, աշակերտութեան և խուռն բազմութեան, պատարագից յետոյ, տեղական եկեղեցում յարգել է յիշատակը Ալէք. Քալանթարի և Ս. Զաւարեանի՝ հոգեհանգիստ կատարել տալով: Հոգեհանգստից առաջ խօսել են Մ. Մարգարեան և Հ. Շըխինեանց հանգուցեալների գործունէութեան մասին:

Բացի դրանից զանազան տեղերում հոգեհանգիստներ են կատարվել, բայց դրանց մասին տեղեկութիւնները տպված են ցաւակցական հեռագրերի մէջ, որոնք հետզհետէ տպվում են «Մշակի» մէջ:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԵՒ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԹԱՓԱՆՑՈՂՈՒԹԻՒՆԸ ՓՈՔՐ-ԱՍԻԱՅՈՒՄ

—

Փարիզ, 18 նոյմ.

Այն օրից, որ Եւրոպայում մեծ ճարտարագործութիւնը սաստկել է գերարտադրութեան տագնապը, եւրոպական պետութիւնների արտաքին քաղաքականութեան առանցքը կազմել է տնտեսական վաճառանոցների նուաճումը: Կարելի է ասել, որ 19-րդ դարի վերջին քառորդի ընթացքում գաղութային արշաւանքները միջազգային պատմութեան գլխաւոր դրուագներն են եղել:

Հին ժամանակներում, քաղաքակիրթ ժողովուրդները գաղթականութեան մէջ փնտռում էին ոսկին և թանգագին ապրանքները, մինչդեռ ներկայումս նրանց մտահոգութեան միակ առարկան ազգային ճարտարագործութեան շուկայի ընդարձակումն է:

Դրանով են միայն բացատրվում կենտրոնական Աֆրիկայի վերջին նուաճումները:

Թիւրքիան իր բնական անսպառ հարստութիւններով չէր կարող վրիպել Եւրոպայի ուշադրութիւնից: Եւ եթէ նա մինչև այժմ գաղութային քաղաքականութեան մի դաշտ չէ ներկայացրել, այնու ամենայնիւ՝ Եւրոպայի տնտեսական թափանցողութեան մի լայն ասպարէզ է ծառայել, ուր շահերի մրցակցութիւնը անսովոր չափեր է ստացել:

«Եթէ Թիւրքիայի մասին մօտ,—ասում է Պօլ Դարբին,—այնքան աղմուկ է բարձրանում, պատճառը թերևս այն է, որ երկար ժամանակից ի վեր Բ. Դուռը մի բաց դուռ է և որ Թիւրքական կայսրութիւնը իր աշխարհագրական դիրքով որոշ չափով աշխարհի քարվանսարայն է, դրված երեք ցամաքների ճանապարհի վրա՝ Եւրոպայի, Ասիայի և Աֆրիկայի միջև: Սուէզի ջրանցքի բացումը Միջերկրական ծովը աշխարհիս առաջնակարգ ուղիներից մէկը դարձնելով՝ իր կողմից պէտք է նպաստէր Թիւրքիան առաւել ևս մեծ պետութեանց ազդեցութեան ենթարկելու: Թիւրքիան շատ թոյլ էր և չէր կարող յետ չը մղել բոլոր նրանցից, որոնք գալիս էին իր մօտ: Միւս կողմից, նա գերագոյն թուլութիւնը ունեցաւ իր քարվանսարայի յաճախորդներին խոստովանելու իր աղքատութիւնը, որոնք նրան օգնեցին իրանց վարկով: Բայց տեսնելով որ ամեն ինչ կարող են իրանց թոյլ տալ, նրանք Թիւրքիան իբրև իրանց տունը նկատելով՝ հաստատվեցին այնտեղ և ստեղծեցին «Օսմանեան հանրային պարտքի» վարչութիւնը, մի հաստատութիւն, որ այսպէս ասած անչափահասութեան վիճակ է առաջ բերում մի ժողովրդի համար:

«Աւելացրէք այս բոլորի վրա և այն, որ նիւթական առաջադիմութեան մեր դարում, երբ ազգերը շոգու և էլեկտրականութիւնից մղված՝ ամեն ճանապարհով գնում են նոր աշխարհներ նուաճելու, Թիւրքիան՝ շուարած և կաշկանդված իր իսլամականութեան մէջ՝ անհամբեր ու գործունեայ ժողովուրդներին հարկադրում է իր արևելեան դանդաղկոտութիւնը, իներցիան և Ղուրանի բանաձևերը»:

Այսպիսով է, որ Թիւրքիան այժմ եւրոպական դրամատիրութեան մի շուկայ է դարձել: Առ այժմ երեք պետութիւններ են, որ ամենից աւելի եռանդուն գործունէութիւն են ցոյց տալիս,—Անգլիան, Ֆրանսիան և Գերմանիան: Բայց այդ երեքից երկուսը միայն, Ֆրանսիան և Գերմանիան են, որ տնտեսական վիթխարի ձեռնարկութիւններ են հիմնել և ազդեցութեան հսկայ շրջանների բաժանել Ասիական Թիւրքիան:

Ցոյց տանք դրանցից իւրաքանչիւրի թափանցողական քաղաքականութեան զանազան արտայայտութիւնները:

Ֆրանսիան Սիրիայում և Պաղեստինում երկար ժամանակից ի վեր քաղաքական, տնտեսական և կրթական առաջին դեր է խաղում: Դեռ խաչակրաց արշաւանքի օրերից, Ֆրանսիայի համբաւն ու վարկը տարածվել է տեղական ազգաբնակութեան մէջ և «կաթօլիկ հովանաւորութեան» մենաշնորհը դարաւոր մի աւանդութեամբ փոխանցվել է նրան: Յայտնի է, որ պատմական այդ շրջանումն են կազմվել Երուսաղէմի թագաւորութիւնը, Եդեսիայի կոմսութիւններն և Անտիոքի իշխանապետութիւնները: Միւս կողմից, 1860-ական թւականներին, Լիբանանի ջարդերի ժամանակ, Ֆրանսիան ուղարկեց մի զօրագունդ, որի հետևանքը եղաւ Լիբանանի ներկայ քաղաքական պրոտոկոլի կազմութիւնը:

Կրթական գործը նոյնքան մեծ ու ազդեցիկ է: Ֆրանսիական կուլտուրան ու լեզուն տարածված է Բէյրութի, ինչպէս և Սիրիայի բոլոր կարևոր կենտրոններում, շնորհիւ բազմաթիւ կրթական հաստատութիւնների, որոնց մէջ աչքի է ընկնում Բէյրութի բժշկական ֆակուլտէտը, ուր, ինչպէս յայտնի է, յաճախող հայերի թիւը պատկառելի համեմատութիւն է կազմում:

Տնտեսական տեսակէտով, մեր անցեալ թղթակցութեան մէջ ցոյց տուինք, թէ ինչ առաւելութիւններ է ձեռք բերել Ֆրանսիան՝ Թիւրքիայի հետ կնքած իր վերջին համաձայնութեամբ: Մի կողմ թողնելով ներկայումս բանող Բէյրութ-Դամասկոս-Հալէպ-Տրիպոլսի գիծը, Ֆրանսիան ձեռք է բերել և Ռայաք-Ռամլէհի (Երուսաղէմ-Ուրֆայի ճանապարհի վրա) երկաթուղային արտօնութիւնը և Եաֆայի, Կայֆայի և Տրիպոլսի նաւահանգիստների շինութեան առանձնաշնորհումը:

Պէտք է նկատել, սակայն, որ այս վերջին տարիներում՝ Անգլիան և Գերմանիան, գլխաւորապէս այս վերջինը, աշխատում են չէզոքացնել Ֆրանսիայի ազդեցութիւնը: Թէև անցեալ ձմեռվայ ընթացքում Անգլիան իր անշահախնդրութիւնը յայտնեց հանրապետութեան Նախագահ Պուանկարէին, այնու ամենայնիւ նրա գաղտնի գործակալները մշտապէս շրջում են Սիրիայում, աշխատելով տեղացիների համակրութիւնը գրաւել դէպի Անգլիան: Եգիպտոսի օրինակը նրանց ձեռքում մի շատ հրապուրիչ փաստ է ծառայում:

Գերմանիան քաղաքականապէս մրցում է Ֆրանսիայի դէմ Սիրիայի ծովափերում, գլխաւորապէս Մերսինում և Ալէքսանդրէտում:

Սիրիայից և Պաղեստինից դուրս ֆրանսիական ազդեցութիւնը լոկ տնտեսական բնաւորութիւն ունի:

Օսմանեան հանրային պարտքի վարչութեան մէջ ֆրանսիական դրամագլխի բաժինը 67.35%-է: Այդ հաստատութիւնը կազմվել է 1881 թ. դեկտեմբերի 20-ին և զբաղվում է պետական այն բոլոր եկամուտներով, որոնք Թիւրքիայի կողմից ներկայացված են որպէս երաշխաւորութիւն իր ստացած փոխառութեանց:

Ծխախոտի ռէժիի մէջ ևս ֆրանսիական դրամագլխի համեմատութիւնը գերազանցող է: Իր վարչական խորհուրդը կատարելապէս ֆրանսիական է: Ինչպէս յայտնի է, այդ հաստատութիւնն է, որ Թիւրքիայում ծխախոտի վաճառման մենաշնորհն ունի և գանձում է սիգարի և ծխախոտի վրա հաստատված մաքսային իրաւունքները: Անցեալ ամառ ծխախոտի ռէժին վերանորոգեց իր պայմանագրութիւնը Բ. Դռան հետ և այդ առիթով պետական գանձարանին 500 միլիոն ֆրանկի մի աւանս ընձեռեց: Այդ ժամանակ Ադրիանուպօլսի խնդիրը դիւանագիտական քննութեան առարկայ էր Եւրոպայում և Ռուսաստանը առաջարկում էր ֆինանսական բօյկոտ յայտարարել Թիւրքիայի դէմ: Ֆրանսիական կապիտալիստների վերոյիշեալ աւանսը ռուսական մամուլի կողմից խիստ քննադատութեան առիթ տուեց:

Երկաթուղային տեսակէտով, Ֆրանսիան ներկայումս շահագործում է 1284 կիլոմետր տարածութեամբ մի գիծ՝ Զմիւռնիա-Կասաբա-Բանդըրմա-Աֆիօն - Գարահիսար և Բէյրութ-Դամասկոս-Հալէպ-Տրիպոլիս:

Նաւահանգիստների կողմից, Ֆրանսիան առայժմ Զմիւռնիայի նաւահանգիստն ունի: Մայրաքաղաքի նաւահանգիստը անգլիական և ֆրանսիական է:

Վերջին համաձայնութեամբ, սակայն, Ֆրանսիան ձեռք է բերել Սև ծովի և Միջերկրականի մի քանի նաւահանգիստների շինութեան արտօնութիւնը:

Ապրանքների ներմուծման մէջ, սակայն, Ֆրանսիան ետ է մնում Գերմանիայից և Անգլիայից: Հետևեալ վիճակագրութիւնը, որ հրատարակել է պ. Ժիրօն, Կ. Պոլսի ֆրանսիական առևտրական սենեակի նախագահը, այդ կողմից ուշագրաւ է.

Ապրանքների ներմուծումը Թիւրքիայում

Գերմանիա . . .	89.505,000 ֆրանկ
Անգլիա	176.227,461 »
Ֆրանսիա . . .	55.207,000 »

Ապրանքների արտածումը Թիւրքիայից

Գերմանիա . . .	71.301,250 ֆրանկ
Անգլիա	138.658,936 »
Ֆրանսիա . . .	100.967,000 »

Ֆրանսիան, ուրեմն, աւելի քիչ ապրանք է ներմուծում Թիւրքիայում, քան ինչ որ գնում է նրանից:

Ինչ էլ որ լինի, Ֆրանսիայի քաղաքական և մանաւանդ տնտեսական ազդեցութիւնը շատ մեծ է Թիւրքիայում: Բաւական է միայն յիշել, որ Թիւրքիայի կնքած պաշտօնական և անպաշտօն փոխառութիւնների գումարի կէսից աւելին Ֆրանսիան է հայթայթել:

Գերմանիան, որ սկզբում լիովին անտարբեր աչքով էր նայում Թիւրքիայի և առհասարակ արևելեան հարցի վրա, վերջին 25 տարիների ընթացքում ձգտում է քաղաքական և տնտեսական հողի վրա առաջնութիւն ձեռք բերել: Արդի քաղաքական

ԻՆՉ ԵՍ ԻՄ ՍՐՏՈՒՄՆ ԱՍԱՑԻ Ի 27-Ն ՀՈԿՏԵՄԲԵՐԻ ԵՒ Ի 28-Ն, ԵՒ...

Տապալված, տապալված։

Քաջարի առաջամարտիկներ էին նրանք։ Անպարագրելի, սաւառնող ոգիներ։ Եւ արդ այժմ լռութեան դատապարտված, դագաղների կափարիչների տակ։

Դագաղ դագաղի կողքի՝ մի անգամից երեք հատ. որոնց մէկը ամենաժիր, ամենարթուն, գերազանցապէս անխոնջ և աննկուն գործողինը, գործող՝ որ խրախուսական խօսքը բերանում պատրաստ և ձեռքը մաճի վրա տապալվեց յանկարծ։

Սա ինչ բան է, հարցնում է գայթակղած միտքը, դառնացած սիրտը։ Ի՞նչ բանի արդեօք ազդարարութիւն համարել դաժան գերանդաւորի այս անագորոյն հունձը։

Համարե՞նք արդեօք այդ բանը նախակարապետ աւելի դառնագունին։ Վհատվե՞նք բեռնթափ այդ շանթահար գլորվածների առաջ, թէ՞ ահեղ գոռանք ժանտ հնձւորի երեսին. Անագորոյն դու, զուր է մեզ վհատեցնելու այդ անողորմ փորձդ. կանգուն ունենք նորագոյն սերունդը, և տակաւին չեն չորացել մեր մայրերի արգանդները մէկը միւսին լաւապէս նմանվող զաւակներ յարուցանելու, քանի որ անցած դարերի ծոցում անմահներն ունենք մեզ օրինակ, և քանի որ այժմ յաւիտենականութեան սեամքը կոխողները գծեցին, նախորդների հետքի վրա, աւելի լայն ու հարթված ուղին, որով ընթանալու են ասպարէզ գալիք սերունդները, դեռ ևս ասպարէզի վրա եղողների խրախուսական ձայնից յորդորված։

Եւ սակայն որքան կսկիծ մէկը միւսի վրա կորցնել մեր առաջամարտիկներին։

Բայց մենք, ով բարեպաշտօն յուղարկաւորներ, ականջ դնենք բնութեան ծոցում անհատաբար խուլ օրօտացող սա ձայնին. «Ես հարկանեմ և ես բժշկեմ, սպանանեմ և կեցուցանեմ, իջուցանեմ ի դժոխս և հանեմ»։

Այո, մայր բնութեան անհուն ծոցից է գալիս այդ ձայնը. նա է որ այդ ձայնն արձակում է վէմերին և վէմերը բաց են անում իրանց արգանդները՝ մարդիկ դիւցազուններ և դիւցազունների որդիներ աշխարհին տալու։

Քաջալերվեցէք, խրախոյս առէք. հայ մօր արգանդը չորանում չէ՝ քանի որ նա աչքի առաջ ունի իր որդիներին. նրանց՝ որոնք վաղ են անցել հերոսական անուն ու գործ թողնելով, և նրանց՝ որոնց մենք այսօր փառաւոր յուղարկաւորութիւնն ենք անում, իրանց անմեռ գործերին դրուատ կարդալով։

Գեղեցիկ օրինակներն իրանց հետևորդներին անպատճառ կունենան։

Քաջալերվեցէ՛ք։

Ա. Մ. Եզեկեան
(Կարսի պատգամաւորը)

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

29 հոկտեմբերի

Լիվադիա.—Պաշտօնական։ Երէկ Նորին Մեծութեանը բաղդ ունեցաւ ներկայանալ և հրաւիրվել Բարձրագոյն նախաճաշի ճաշ. հաղորդակցութեան մինիստր Ռուխլովը։

Պարիզ.—Դեսպան Իզվոլսկին ի պատիւ Կոկովցեվի ճաշ տուեց։ Ներկայ էին պալատների նախագահները, մինիստր-նախագահը, կաբինետի անդամները, գեներալ Ժոֆֆր, Վիշնէգրադսկին, Դաւիդովը, Պուտիլովը և այլք։ Ճաշից յետոյ տեղի ունեցաւ ընդունելութիւն։

Պրեզիդենտ Պուանկարէն նախաճաշ տուեց ի պատիւ ստատս-սեկրետար Կոկովցեվի։ Ներկայ էին ռուսաց դեսպան Իզվոլսկին, Դաւիդովը, Րաֆալովիչը, ֆինանսների մինիստրի քարտուղար Դօրլիակը, մինիստրներ Բարտուն, Պիշօնը, Կլօտցը, Դիւմօնը, Էտիէնը, Բօդէնը։

Լոնդօն.—Գիլդհօլում կայացաւ սովորական բանկէտը, լօրդ-մէր ընտրելուց յետոյ։ Ներկայ էին առաջին մինիստր Ասկվիտը, ծովապետութեան առաջին լօրդ Չերչիլը և ուրիշ մինիստրներ, արքեպիսկոպոսներ և դիպլոմատիկական մարմինը։ Չերչիլը, պատասխանելով Մեծ-Բրիտանիայի նաւատորմի համար առաջարկված կենացին, ասաց, որ ներկայումս եւրոպական խաղաղութեան խախտման վտանգը շատ նուազեց, բայց և այնպէս զինաւորման պակասեցնելու մասին ոչ մի խօսք չը պէտք է լինի։ Ասկվիտը շօշափեց բալկանեան դէպքերը և յայտնեց, որ այժմ թէպէտ խաղաղութիւնը յաղթանակեց, բայց դեռ վաղաժամ է որևէ եզրակացութիւն անել. բայց պետութիւնների պատասխանատւութիւնը մեծ է այն նոր ժողովուրդների առաջ, որոնց համար նրանք հովանաւոր դարձան։ Այնուհետև Ասկվիտը յայտնեց լիովին գոհունակութիւն զինեալ կոնֆլիկտի սահմանափակման առիթով, որով չը ձեռնմխվեց Ասիական Թիւրքիան։ Բրիտանական կառավարութիւնը ցանկանում է պահպանել նրա անձեռնմխելիութիւնը, չէ կարող նմանապէս անտարբեր վերաբերվել այն ամենին, ինչ վերաբերում է սուրբ տեղերին։ Թիւրքիայի անձեռնմխելիութեան ամենալաւ ապահովութիւններն են ներքին ռէֆօրմները, որ պէտք է մտցնել մեծ պետութիւնների աջակցութեամբ։ Մեկսիկայի դէպքերի վերաբերմամբ Ասկվիտն ասաց, որ Անգլիան նախագահ ճանաչեց Խուէրտային, չունի ցանկութիւն և իշխանութիւն խառնվելու մեկսիկական գործերի մէջ և անշեղ հետևում է իր քաղաքականութեան. Չինաստանի վերաբերեալ Ասկվիտը յոյս տածեց, որ կենտրօնական կառավարութեան ու նահանգների միջև կը կայանայ համաձայնութիւն։ Ճառի վերջում Ասկվիտը, շօշափելով զինաւորման ազդեցութիւնը առևտուրի վրա, ասաց, որ պետական գործիչները պէտք է քննեն այդ հարցը։

Լօնդօն.—Րէյտէրի տեղեկութիւնների համաձայն, աջողութեամբ շարունակվում են մեծ պետութիւնների բանակցութիւնները Ալբանիայի հարաւային սահմանների հարցի վերջնական վճռի մասին։

Հռոմ.—Տեղիս քաղաքական շրջաններում մատնանշվում է, որ եռեակ դաշնակցութիւնը թոյլ չի տայ որևէ փոփոխութիւն Լոնդոնի վեհաժողովի վճիռների մէջ Ալբանիայի նկատմամբ։

Վալոնա.—Եկան հոլլանդական կառավարութիւնից առաքված օֆիցերներ Վէեր և Տօմսօնը՝ ալբանական ժանդարմերիան կազմակերպելու համար։

Բելգրադ.—«Պրէսս-Բիւրօյի» տեղեկութիւնների համաձայն, սերբ-բոլգարական մասնաժողովը Դօժիրէցի պահակատեղիի հարցը լուծել է յօգուտ Սերբիայի։

Կ. Պոլիս.—Բոլգարական առաջին պատգամաւոր Սավօվը հոկտեմբերի 28-ին մեկնեց Սօֆիա, բացատրելով որ կը վերադառնայ չորս օրից յետոյ և որ նրա մեկնումը Բոլգարիա ոչ մի ագրեսիվ նպատակ չունի։

Պրագա.—Չեխական «Սվասօվլէտօվա» կուլտուրական միութիւնը դիմեց շվեդական գիտութեան ճեմարանին, բողոքելով որ մտադրութիւն կայ Նոբելի մրցանակը տալ շտիրիի ժողովրդական գրող Րօզէգգերին։ Միութիւնը, ընդունելով Րօզէգգէրի գրականական ծառայութիւնները, բողոքում է նրա գերմանասիրական գործունէութեան դէմ, որ ուղղված է ընդդէմ չեխերի և սլովինցների։

Վաշինգտօն.—Բրայանը խորհրդակցելով մեկսիկական հաւատարմատարի հետ՝ յայտնեց նրան, որ Միացեալ Պետութիւնները մեկսիկական կոնգրէսի ընտրութիւնները ճանաչելու են անվաւեր, ինչպէս և պրեզիդենտի և փոխ-պրեզիդենտի ընտրութիւնները։

Մանիլիա.—Ամերիկական ութ ռազմանաւ կանգնած են այստեղ հոկտ. 26-ից, խարիսխ ձգած։

գործիչները շատ հեռու են բիսմարկեան հայեացքներից։ Եւ ամենքին յայտնի է, թէ որքան գերակշռող է եղել Գերմանիայի քաղաքական ազդեցութիւնը համիդեան տիրապետութեան ժամանակ և նոյնիսկ երիտասարդ թիւրքերի coup d'état-ից յետոյ։

Գերմանական թափանցողութիւնը այնքան բուռն ու սիստեմատիկ կերպով է կատարվում, որ այսօր միայն յաղթանակ բառով կարելի է որակել նրա փոքր-ասիական քաղաքականութիւնը։

«Գերմանական յաղթանակի և նուաճման մի խորհրդանիշն է,—ասում է Պօլ Պարսին,—այն հսկայական պահականոցը, որ Կ. Պոլսի գերմանական դեսպանատունն է կազմում։ Նրա գագաթի վրա գամվող վեց արծիւները կարծես որս բռնելու համար են բացել իրանց լայնարձակ թևերն ու սրածայր ճանկերը և ուզում են յարձակվել Թիւրքիայի վրա»։

Եւ այդ յաղթանակը, նուաճումը արտայայտվում է Թիւրքիայի զինւորական, քաղաքական ու տնտեսական ասպարէզներում։

Ամբողջ բանակը, նրա ռազմական ու տեխնիքական բովանդակ կազմակերպութիւնը բղխում է Գերմանիայից։ Չը կայ թերևս մի օֆիցեր, որ ուղղակի կամ անուղղակի կերպով գերմանական մեթօդներից ներշնչված չը լինի. և այդ իրողութիւնը աւելի ցայտուն կերպով է արտայայտվում, քանի բարձրանում ենք զինւորական հիերարխիայի սանդուղները։

Շատերին թւում էր, թէ գոնէ երիտասարդ-թիւրքերը հրաժեշտ պիտի տային գերմանական զինւորական մեթօդներին։ Բայց դա սխալ մի ենթադրութիւն էր, քանի որ բանակի բոլոր հրամանատարները սնված ու դաստիարակված էին Բեռլինի զինւորական դպրոցներում։ Եւ փորձը ցոյց տուեց, թէ ինչպէս երիտասարդ-թիւրքերը բանակի վերակազմութեան գործը յանձնեցին Գերմանիային, նրանից գնելով ոչ միայն ցամաքային սպառազինութեան բոլոր անհրաժեշտ միջոցները, այլ և ծովային ուժերի ամենագլխաւոր ազդակները՝ զրահանաւերը։

Չը նայած որ բալկանեան պատերազմի ժամանակ Գերմանիան ոչ մի կերպով ձեռք չը կարկառեց պարտված ու ընկճված Թիւրքիային, այնուամենայնիւ Վիլհելմ կայսրը մինչև այժմ դեռ վայելում է «մահմեդականների պաշտպանի» հռչակն ու պատիւը, և թիւրք «դիւանագէտներն» ու «քաղաքական գործիչները», թւում է թէ, իրանց mot d'ordre դարձեալ գերմանական դեսպանատնից են ստանում։

Գերմանիան այսօր Միջերկրականի արևելեան ջրերում 6 զրահանաւեր է պահում, որոնց կայանը առ այժմ աւստրիական Պօլա նաւահանգիստն է, բայց որոնք միշտ Ալէքսանդրէտի ափերում են շրջում։ Այս իրողութիւնը ոչ մի կասկած չէ թողնում Գերմանիայի հետապնդած ձգտումների նկատմամբ։ Ասիական Թիւրքիայի քաղաքական բաժանման առաջին ազդանշանին, նա անմիջապէս պիտի փորձէ գրաւել այն ընդարձակ շրջանը, ուր իր տնտեսական գերիշխանութիւնն է հիմնել։ Եւ հեռու չէ անշուշտ այն օրը, երբ Ալէքսանդրէտի նաւահանգիստը գերմանական արևելեան նաւաբաժինի կայանը կը դառնայ։ Այդ վտանգը արդէն գուշակվում է Ֆրանսիայում և մեծ մտահոգութիւն է պատճառում դիւանագիտական շրջաններին, որովհետև Ալէքսանդրէտի ծովախորշը իշխում է Միջագետքի և Հայաստանի հարաւ-արևմտեան մասի վրա և, հետևաբար, նաւային գործունէութեան ամենակարևոր հիմք է ծառայում։

Այժմեանից արդէն Գերմանիան պատրաստվում է իր այդ նպատակը իրագործել և նաւահանգստի կառուցման գործը ինքն է ստանձնել։

Երկաթուղային շահագործման տեսակէտով, Գերմանիան ձեռք է բերել Փոքր-Ասիայի ամենայայտնի գիծը՝ Անատոլիա-Բաղդադը, որ սկսվելով Հայդար-Փաշայից՝ անցնում է Կենտրօնական Անատոլիան, Հայաստանի հարաւային մասն ու ամբողջ Միջագետքը՝ մինչև արաբական Բասրա քաղաքը։ Ամբողջ այդ գիծը ներկայացնում է 2871 կիլօմետր մի տարածութիւն։ Բացի այդ գծից, Գերմանիան ներկայումս շահագործում է և Հիջազի գիծը, որ 1466 կիլօմետր տարածութիւն ունի։ Մեկկա գնացող մահմեդական ուխտաւորները գլխաւորապէս այդ գիծն են վերցնում, որ մրցում է Դամասկոս-Բէյրութի ֆրանսիական գծի հետ։

Գերմանական վաճառականութիւնն ու ճարտարագործութիւնը նոյնպէս աչքի ընկնող տեղ են գրաւում Թիւրքիայում։ Գերմանական ապրանքները տարածված են բոլոր շուկաներում, մինչև իսկ Դամասկոսում, Բէյրութում և սիրիական այլ կենտրօններում, ուր ֆրանսիական ազդեցութիւնն այնքան տիրապետող է։

Ջավիդ բէյը այժմ պատրաստվում է Գերմանիայի հետ ևս կնքել մի համաձայնութիւն։ Գերմանիան, ի հարկէ, ձեռք պիտի բերէ և ուրիշ առաւելութիւններ, որոնք աւելի ևս պիտի ընդարձակեն ու ամրապնդեն իր ազդեցութեան շրջանակը Փոքր-Ասիայում։

Սրանք են, ահա, իրանց խոշոր գծերի մէջ, ֆրանսիական և գերմանական թափանցողութեան զանազան ձևերն ու արտայայտութիւնները։

Տնտեսական ու քաղաքական նուաճման այս անդիմադրելի հոսանքի առաջ՝ մեզ՝ Թիւրքիայի հալածված ժողովուրդներիս մնում է միայն ցանկալ, որ փոքր-ասիական նահանգներում ներմուծվելիք բարենորոգումները որքան կարելի է շուտ իրականանան, փրկելու համար դժբաղդ երկիրը ջարդերի ու աւերի չարատանջ մղձաւանջից։

Ե. Սաֆրաստ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

ԼՈՒՐԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

Հայաստանում բարենորոգումներ մտցնելու ռուսական նախագիծը թիւրքական կառավարական շրջաններում ընդունվել է չափազանց դժկամակութեամբ։ Բ. Դուռը ռուսական նախագիծը գտնում է անընդունելի և պատրաստ է Հայաստանում բարենորոգումներ մտցնելուն, միայն առանց օտարազգի վերահսկողութեան։ Ինչպէս խօսում են, Պետերբուրգ եկած թիւրքաց նախկին մինիստր Ջանիբ-բէյը պաշտօն ունի բանակցել հայկական բարենորոգումների մասին։

Կ. Պոլսից հեռագրում են, որ Թիւրքիան վերադարձրեց պետութիւններին Հայաստանի բարենորոգումների նախագիծը, ընդունելով նախագիծն անիրագործելի։

ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՏԱՐՕՆԷՆ

Մուշ, 20 սեպտ.

Թիւրքահայոց նորընծայ պատրիարքին ներկայ ճամբորդական այցը եթէ ոչ հիմնական, գէթ ժամանակաւորապէս կարող է բարերար ազդեցութիւն մը ունենալ հայ և թիւրք յարաբերութեանց վրայ։ Բայց դժբաղդաբար այդ գործի մէջ ալ աւելի քան կը փայլի օսմ. կեղծիքն և շողոքորթ պոլիտիկայութիւնը։ Մէկ կողմէն ի՜նչ շռայլ խոստումներ և ի՜նչ ձևական արտաքոյ կարգի մինիստրական պատուասիրութիւններ կը շռայլուին հայոց պատրիարքին, միւս կողմէն կրկին թալանի, աւարառութեանց և սպանութեան դէպքերը անպակաս են նոյն իսկ այդ պատմական օրերուն մէջ, երբ մէկ կողմէն քիչ շատ անգլիացի և այլազգի զբօսաշրջիկներ կանցնին այս տարաբաղդ ու չարատանջ երկրէն և միւս կողմէն հայոց նորընծայ պատրիարքի գալստեան կը սպասուի։ Թիւրք կառավարութիւնը այնպէս վարպետութեամբ կը վարագուրէ պատահած այդ դէպքերը, որ մակերեսային ակնարկով կը կարծէք, թէ խաղաղութիւնը կատարեալ է գաւառներու մէջ։

Այսպէս՝ այս շաբթու Սւրանի և անկէ կէս ժամ հեռի Ալատին փոքրիկ հայ գիւղին մէջ՝ տխրահռչակ Ալիի ձեռքով տէրրօրն ու հարստահարութիւնք սկսեր են ալեկոծել դժբաղդ շինականները։ Յիշեալ Ալիի տղայ Կօջէն կուզէ գործ ունենալ համագիւղացի (ահա քանի տարիէ ի վեր Ալին իր ընտանիքով բռնի ուժով հաստատուած է այդ խեղճ գիւղին մէջ և հայ գիւղացիին քըրտինքով շինած է փառաւոր քէօշկ մը և յափշտակած է գիւղացոց հողերը) հողագործ Միսաքի համեստ կնոջ՝ Սառէի հետ։ Կինը մերժելով կը մերժէ քիւրդին լկտի առաջարկը։ Քիւրդը նեղսրտելով կը վերցնէ հաստ փայտ մը և կիյնայ խեղճ կնոջ վրայ ու զարնելով խեղճ կնոջ աջ թևը բազուկէն կը ջախջախէ։ Կինը ուշաթափ վար կիյնայ, և քիւրդը, ինչպէս կը հաւաստեն եղած բողոքները, բռնաբարելով խեղճ ուշաթափ կինը՝ կը հեռանայ... Շատ ուշ ատեն կնոջ մարդը կը տեղեկանայ ցաւալի իրողութեանց մասին և գիշերով կը մեկնի դէպի Մուշ՝ բողոքելու։ Ասոր վրայ Կօջէն բարկանալով՝ իսկոյն կէս գիշերին կը վառէ Միսաքի դէզը, որուն հետ և կը բռնկին քանի մը համագիւղացիներուն խոտի դէզերը։ Այդ գիշերուան այրուած դէզերու քանակը կը հասնի մօտ 45—50 բարդ խոտի, որ դրամի վերածելով՝ նոյնքան լիրայի դրամական կորուստ ըսել է։ Այս չարագործութեան վրայ՝ գիւղացիներն աւելի սարսափած ետ կը դարձնեն Միսաքն և այլ ևս չեն բողոքեր կառավարութեան։

Երկու օր յետոյ Սւրանը կրկին կալեկոծի։

Սւրանցիք ստիպուած են այս աշնան եղանակին՝ ահ ու սարսափը մէկ կողմ թողած՝ իրենց գիւղէն մէկ ժամ հեռի լեռ բարձրանալ իրենց համար ձմեռուան քիչ մը ցախ ու փայտ ձեռք բերելու։ Երկրի բնական դիրքի օրէնքով՝ այդ լեռը կը պատկանի ինչպէս շրջակայ քիւրդերուն, այնպէս և սւրանցոց։

Եւ ահա այդ յանդուգն փայտահաւաքները առաջին առթիւ իսկ կը հանդիպին Ալիի տղայ ոճրագործ Ֆէրիքին, որ հազիւ 2 ամիս առաջ սպաննեց Կիկոյի Ասոյի 27 տարեկան տղան, և այժմ ալ քանի մը ընկեր քիւրդերով յարձակելով սւրանցոց վրայ՝ առանցմէ մէկ քանին կը կողոպտէ և մէկ երկուքն ալ այնքան կը ծեծէ, որ ուշաթափ վիճակի մէջ հազիւ սայլի վրայ դրած կը բերեն գիւղ։ Այս ծեծուածներէն Սրգէի Ցարոյի վիճակը շատ ծանր կերևի և մահէն ազատելու յոյս չկայ...։ Ալիի տղայ փախստական Ֆէրիքը կը սպառնայ եղեր Սւրանէն սպաննել շատ անձնաւորութիւններ, որովհետև ատոնք չեն փութացեր կառավարութեան բանտէն ազատել իր եղբայր Համզէն, որ ձերբակալուած է եղեր սւրանցոց բողոքին վրայ...։

Սւրանցիք աւելի ահ ու դողի մէջ ինկած Կօջէի այս նոր սպառնալիքէն՝ որոշեցին առանց կառավարութեան բողոքելու գաղթել, բայց ուր՝ իրենք ալ չեն գիտեր. միայն՝ այս երկու օրուան մէջ, լսելով նորընծայ պատրիարքին մօտալուտ այցը, մտադրած են վերջին դիմումն ալ կատարել պատրիարքին։ Ի՞նչ պիտի լինի հետևանքը, հիմիկուընէ մեզ համար պարզ է. օսմ. կառավարութիւնը այս գործերուն մէջ ալ պիտի խաբէ պատրիարքը, ինչպէս խաբած է տեղական առաջնորդը, թէ «Ֆէրիքը փախստական է և չենք կարող ձեռք բերել». մինչդեռ գիւղացիք կը վկայեն, որ ոստիկանները իրենք անձամբ կը պահեն աւազակ, ոճրագործ Կօջէն։ Այս և ուրիշ աւելի մանր խնդիրներ նորից բազմաթիւ են դաշտի գիւղերու մէջ։

Անցեալ օր Մուշի դաշտին հայաբնակ գիւղերէն մէկը մտնելով խուժդուժ քիւրդերը տարած էին չորս եզ՝ 12 ոսկի արժողութեամբ։ Անասնատէրը կառավարութեան բողոքեց, բայց անօգուտ։ Վերջապէս ինք ստիպուեցաւ գողերուն գլխաւորները տեսնել և մէկ եզը անոնց տալով՝ երեքը ետ բերել։ Ալիքլամի մէջ նախորդ գիշեր վառած են 3 բարդ ցորեն և 2 խոշոր դէզ խոտ։

Ասկէ քանի մը օր առաջ Բուլանըկի մէջ գիշերանց սպաննուեր են քիւրդերու ձեռքով 2 հայ. թէ ինչո՞ւ և ինչպէ՛ս են սպաննուեր անոնք, մանրամասնութիւնը կը պակսի մեզ։

Մեր թղթակցութիւններէն մէկուն մէջ գրած էինք, թէ Մուշի առաջնորդարանին նախկին քարտուղարը՝ Նազարէթ Մարկոսեան, որ այժմ կը կատարէ ս. Կարապետի վանուց աշխարհական նուիրակի պաշտօնը, վերջերս կողոպտուեցաւ Սասունի Ծովասարի վրայ։ Հիմա ալ՝ ասկէ շուրջ տասն օր առաջ՝ Բուլանըկի Մանազկերտ թեմէն վերադառնալու պահուն՝ դարձեալ կը թալանուի զրանքանցի քիւրդերէն և հազիւ հազ զինքը գլխաբաց և մերկ ու ոտաբոբիկ, անդրավարտիկով մը կը ձգէ Ցրոնք գիւղը։

Նազարէթէն յափշտակած են աւանակ մը՝ բեռցուած տիկ մը տեղական պանիրէն և 2 տիկ ժուժիկ, դրամ, հագուստ և այլն, շուրջ 1500 ղրուշ արժողութեամբ։

Թախիծ

ԻՒՇՉԻՆՍԿԻԻ ՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԸ

ԲԷՅԼԻՍԻ ԳՈՐԾԻ ՎԱԽՃԱՆԸ

Բէյլիսի աշխարհագղորդ գործը վերջացաւ։

Ամբողջ մի ամիս բովանդակ քաղաքակիրթ աշխարհը ոտքի էր կանգնած, և ամենքի աչքերը յառած էին Կիեվի վրա, ուր տեղի էր ունենում դատավարութիւնը։ Եւ ամբողջ քաղաքակիրթ աշխարհը սրտատրոփ սպասում էր դատավճռին։

Իսկապէս դատվողը, մեղադրվողը հրէայ թշուառ Բէյլիսը չէր. դատվողը, մեղադրվողը ամբողջ հրէական ազգն էր։ Այդ զգում էին ամենքը և դրա համար Բէյլիսի գործը համաշխարհային հետաքրքրութիւն էր շարժել։ Եթէ ապացուցվէր լոկ այն փաստը, որ մանուկ Անդրէյ Իւշչինսկիին սպանել է հրէայ Բէյլիսը, այստեղ ոչ մի առանձին հետաքրքրութիւն կամ կարևորութիւն ունեցող խնդիր չը կայ. սպանութիւններ շատ են կատարվում և աւելի տրագիքական պայմաններում, աւելի զարհուրելի ձևով, բայց մարդասպանները, եթէ յայտ են գալիս, կրում են իրանց պատիժը, և դրանով վերջանում է ամեն բան։ Այդպիսի մի ոճիր և այդպիսի մի մարդասպան չէր կարող համաշխարհային հետաքրքրութիւն գրաւել։

Սակայն ներկայ դատի մէջ հարցը այնպէս էր դրված, և նա այնպիսի բնաւորութիւն էր կրում, որ նրա ելքից էր կախված եթէ ոչ վերջնական, բայց յամենայն դէպս հեղինակաւոր լուծումն մի կարևորագոյն հարցի, որ ամբողջ դարեր յուզում է մարդկութիւնը, որ Դամոկլեան սրի նման կախված է մի ամբողջ ազգի՝ հրէական ազգի գլխին, այն է մեղադրանքը մի ամբողջ ազգի, թէ նա իր կրօնական ծիսակատարութիւնների համար գործ է ածում քրիստոնէական արիւն, այսինքն մեղադրանք մի ամբողջ ազգի գլխին, թէ նա ամբարշտօրէն ֆանատիկոս է և չէ քաշվում նոյն իսկ ոճիրից։ Դարերի ընթացքում քրիստոնեաները բարդել են հրէաների վրա այդ սոսկալի մեղադրանքը, և չը նայելով որ հրէաները միշտ հերքել են, չը նայելով որ եւրոպական գիտութեան, գրականութեան և մտքի լաւագոյն ներկայացուցիչները համարել են այդ մեղադրանքն անհիմն, անգոյ, արդիւնք միայն քրիստոնեաների կրօնական ֆանատիկոսութեան, բայց այնուամենայնիւ մեղադրանքը, կասկածը չը փարատվեց մինչև այսօր։

Եւ ահա Բէյլիսի գործը, որ քննվում էր երդուեալ-դատաւորների ձեռքով, ստանում է առանձին կարևորութիւն, որովհետև երդուեալ-դատաւորների, իբրև ներկայացուցիչների հասարակական խղճմտանքի, դատավճիռը, ահագին և պատմական նշանակութիւն է ստանում։

Արդ, ինչ դատավճիռ արտասանեցին Կիեվի երդուեալ դատաւորները։ Նրանք յայտարարեցին, որ Բէյլիսը մեղաւոր չէ Անդրէյ Իւշչինսկիի սպանութեան մէջ, որ նա անպարտ է և չէ գործել այդ ոճրագործութիւնը, բայց նրանք կողմնակի կերպով ճանաչեցին և այն փաստը, որ Անդրէյի սպանութիւնը կատարվել է արիւն քամելու նպատակով։ Այդպիսի հանգամանքների մէջ, հարցը դեռ վերջնականապէս լուծված չէ կարելի համարել, և հրէատեաց մոքերը միշտ պատրաստ են ունենալու հալածանքի որոմներ ցանել հրէաների դէմ։

Յամենայն դէպս Բէյլիսի արդարացումը՝ նոյնիսկ այդպիսի վերապահումներով՝ պէտք է ողջունել, որովհետև նա փարատեց այն սոսկալի մղձաւանջը, որ տիրում էր ամենքի մտքի և սրտի վրա, և այն անհեթեթ, անմիտ մեղադրանքը, որ այնքան թեթևամտօրէն նետում են շատերը հրէաների երեսին։

Եւ որպէսզի կարելի լինի մեր ընթերցողների համար անմիջական և ամփոփ գաղափար կազմել ներկայ գործի և բիտուալ (ծիսակատարական) սպանութեան ամբաստանութեան մասին, մենք յաջորդ անգամ կը տանք մեղադրող և պաշտպանող կողմերի մեղադրական և հերքողական արգումենտների համառօտ տեսութիւնը։

Հ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Կ. ԽԱՏԻՍԵԱՆԻ ՄԱՀՎԱՆ ԱՌԻԹՈՎ

Հայ ժողովուրդը՝ վերջին օրերում մէկը միւսի ետևից, զրկվելով իր խոսկի և հարազատ որդիներից՝ մեծ, ծանր և զգալի կորուստ ունեցաւ։

Կ. Խատիսեանը մեռաւ և ընդմիշտ բաժանվեց մեզանից. այդ կորուստը զգալի է մեզ համար, բայց աւելի և աւելի պիտի զգայ Բագուի հայութիւնը, որովհետև այդ վայրումն էր հանգուցեալը ընտրել իր գործունէութեան ասպարէզը, ուր նա չէր խնայում ոչ ոյժ, ոչ եռանդ հայութեանը մատուցանելու իր անխոնջ ծառայութիւնը։

Կոստանդին Խատիսեանը մէկն և յառաջն էր նաւթի աշխարհը ալեկոծող այն բազմաթիւ ինտելիգենտ երիտասարդներից, որոնցից միմիայն ինքը իր կամքի ոյժգին թափով կազմակերպեց Բագու քաղաքում Կուլտուրական Միութիւնը և իր անվեհեր ու վստահ տոկունութեամբ քաղաքից քաղաք շրջելով, սրա նրա դուռը բաղխելով մի սուար գումար հանգանակեց ժողովրդի կարօտ խաւերում կուլտուրա տարածելու, դպրոցների միջոցով։ Նա միշտ աղաղակում էր՝ «կուլտուրա, կուլտուրա և կուլտուրա», և անշեղ ընթանում այդ պաշտելի ճանապարհով։

Նա իր շրջապատում, Բագուի կեանքի իրականութեան մէջ, այն հազուագիւտ գործիչներից մէկն էր, որի նմանը Բագուն հազիւ թէ կարողանայ ունենալ։

Նրա թաղման առիթով մենք միացնելով մեր ողբը նրա ազգականների՝ բարեկամների և սիրելիների ողբի հետ՝ ցաւում ենք այդ կորուստը և հանգիստ մաղթում նրա աճիւնին։

Մ. Եպիսկոպոսեան

ԲԵՆԻԿ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԽՕՍՔԸ Կ. ԽԱՏԻՍԵԱՆԻ ԳԵՐԵԶՄԱՆԻ ԱՓԻՆ

Սրտիս կսկիծը, հոգուս մռմուռն եմ փռում այս լայնաբերան վհի, այս գերեզմանի ծոցը, ուր Կոստանդին Խատիսեանի հոգեղէն նշխարներն են հանգչելու։

Խատիսեանը մի դէմք էր. համակ ազգաշահ վսեմ տենչանք, համակ ջինջ ու վսեմ գաղափար, համակ կամք, համակ եռանդ, համակ կազմակերպիչ զօրութիւն, համակ հաւատ դէպի վսեմն ու իդէալական, համակ հայութիւն, համակ կրօնք։ Այս ազնիւ տարբերքից նա իր կրօնքն էր կառուցել, որի ֆանատիկոս երկրպագուն էր, անձնուէր սպասաւորը։ Ամենայն մեծութիւն կրօնք ունի և ֆանատիկոս է։

Բայց այժմ, տեսէք, գօսացել է այն յաղթ բազուկը, որ հայոց էն իդէալական ընկերութեան հիմքը գրաւ, կարկամել՝ այն ազնիւ ձեռքը, որ գաւառի, հայ անճար գիւղացու վարժարանի լապտերը վառեց, քարացել են այն արծուէհայեաց աչքերի բիբերը, որ յառած էին չարատանջ, կեղեքված գիւղացու վրա, ուր գեղջուկի հիացմունքի ժպիտն էր խաղում, որից սարսափում էին գաւառի վաշխառու կեղեքիչները։

«Ես հայ եմ, ասում էր նա ինձ,—հայ հողի վրա հաստատապէս կանգնած. աշխարհիս ոչ մի հոսանք, ոչ մի ոյժ ինձ իմ դիրքից խախտել, հանել չէ կարող»։

Եւ այս խօսքերը լոկ բառեր չէին, այլ ոյժ, հոգու զօրութիւն, որ երկաթի ծանրութեամբ թափվում էին նրա շրթունքներից իմ սրտիս վրա։

Անպարտելի մարդ, որին պարտել կարող էր միայն մահը, որին կլանել կարող էր միայն գերեզմանը։

Հո՛ղ հայրենի, ազգային տաճարի գի՛րկ սրբազան, քո ծոցն է գալիս քեզ ջերմապէս սիրող, քո ուխտաւոր Կոստանդինը։

Քեզանից դուրս, գերեզմա՛ն, քո վրադ կախված, միշտ կախված կը մնայ նրա վառած կանթեղը, իր անմահութեան կանթեղը, որ միշտ պիտի տեսնեն հայերն ու հայութիւն, քանի որ հայի հոգու, մաքի աչքը չէ կուրացել, քանի որ հայը վսեմն ու բարին տեսնելու ընդունակութիւնը չէ կորցրել։

Խաղաղութի՛ւն քեզ, սիրելի Կոստանդին։

ՄԻ ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ԳՈՐԾ

Գիւտ աւագ-քահանայ Աղանեանցը գանգատ ներկայացրած լինելով «Մշակ» լրագրի խմբագրութեան դէմ №№ 36 և 38-ի մէջ տպված յօդուածների համար, որոնց բովանդակութիւնը նա իր պատուի համար արատաւորիչ է համարում, հոկտեմբերի 22-ին մեր լրագրի հանգուցեալ խմբագիր Ալ. Քալանթարը քննիչի մօտ ներկայանալու կոչնագիր էր ստացել, սակայն նրա անակնկալ մահվան պատճառով, քննիչի մօտ գործը յետաձգվել էր ամսիս 30-ին, երբ ներկայացաւ Հ. Առաքելեան։ Ցայտնվեց, որ «Մշակի» այս տարւայ № 36-ի մէջ տպւած «Ստուգման կարօտ մի հարց» վերնագրով և № 38-ի մէջ տպված «Խմբագրութիւնը յայտնում է» վերնագրով յօդուածները, որոնց բովանդակութիւնից այն եզրակացութիւնը կարելի էր հանել, թէ Գիւտ աւ.-քահանան յայտնի չէ ինչ միջոցներով է ձեռք բերել այն 80 ձեռագիրները, որ նա վաճառել է Պետերբուրգում, նա՝ տէր-Գիւտը համարում է վիրաւորիչ իր պատուի համար, ուստի և գանգատվել է։

Քննիչը առաջարկեց կողմերին հաշտվել։

Հ. Առաքելեան յայտնեց «Մշակի» խմբագրութեան կողմից, որ խմբագրութիւնը ունենալով այժմ իր տրամադրութեան ներքոյ ապացոյցներ, որ հաղորդած այդ տեղեկութիւնը սխալ է և չէ համապատասխանում իրականութեան, պատրաստ է հերքել և յայտնել, որ վերոյիշեալ համարների մէջ տպված տեղեկութիւնները ճիշդ չեն և արդիւնք իրան հաղորդված սխալ տեղեկութիւնների։

Հաշտութիւնը կայանալով՝ քննիչը կազմեց արձանագրութիւն վերոյիշեալ մասին և գործը յայտնվեց դադարեցված։

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Տնտեսական տագնապ

Քութայիս, 26 հոկտ.

Շարունակ գանգատներ են լսվում սիմինդրի պակասութիւնից և նոյնիսկ սովի երկիւղ կայ։

Սիմինդրը Քութայիսի նահանգում ներկայանում է միակը որպէս հաց, որով կերակրվում են տեղացիները։ Շատ ուշ է հասնում, այնպէս որ սեպտեմբերի կէսին են սկսում հաւաքել տարւայ բերքը։ Հազիւ է պատահում, որ այդքան երկար ժամանակամիջոցում մի որևէ աղէտ չը պատահի այդ պտղի գլխին։ Նրան վնասում են թէ շատ անձրևները, թէ խիստ երաշտը, բայց ամենասոսկալին դառնաշունչ քամիներն են, որ այստեղ սովորական երևոյթ է և երբեմն տևում են շաբաթներով։ Քամին արմատից չորացնում է նրան և գետին տապալում։ Կարկուտից երկիւղ չը կայ։ Կարկուտ այստեղ շատ հազիւ է պատահում, այն էլ՝ չնչին կերպով և շատ փոքրիկ հատիկներով, մի քանի վայրկեան տևելով։

Այս տարի ամառվայ վերջին ամիսները շատ չորային եղան և շարունակ փչում էր հարաւ-արևելեան տաք քամի, որ բոլորովին աւերեց սիմինդրի արտերը։ Իսկ ձեռք բերած չնչին սիմինդրի որակը շատ ստոր է, որից չէ կարելի ալիւր աղալ, և պիտանի է միայն իբրև հաւերի կուտ։

Գիւղացիք շատ յուսահատված են։ Գուցէ իրանք մի կերպ կառավարվեն, նախ՝ որ այստեղի ազգաբնակութիւնը սակաւապետ է, քիչ ուտող, երկրորդ՝ այս տարի խաղողի բերքը լաւ է և ծախած գինին կարող է ուտելիքը լրացնել։ Բայց ձմեռը ինչո՞վ կերակրեն անասուններին։ Այստեղի անասուններն էլ կերակրվում են սիմինդրի ճիւղերով (ճալա), որը սիմինդրը քաղելուց յետոյ ժողովում են և չորացնելով պահում ձմեռվայ համար, որպէս անասունների համար ապուր։ Բայց չը կայ այժմ այդ. անասունները զրկված են իրանց այդ բաժնից։

Խոտ այստեղ չի լինում։ Խոտը այստեղ ստացվում է Կարսից, Ղարաբաղից և այլ տեղերից։ Նա էլ շատ թանգ է. պուդը 70 կոպէկ։ Ասում են՝ ապագայում աւելի պէտք է թանգանայ, որովհետև այս տարի խոտը ամեն տեղ սակաւ է։ Ուրեմն գիւղացու անասուններն այս տարի ենթարկված են սովամահ լինելու վտանգին։

Գիւղացիները վաղօրօք իրանց տնտեսութեան մանր կենդանիները ծախել են, որպէսզի ազատ լինեն նրանց կերակրելուց, ուստի առաջ է եկել թանգութիւն։ Ձուի հատը 3 կոպէկով դժուար է ճարվում։ Շատ թանգ է և թռչնեղէնը և այլ կենդանիները։

Կացութիւնը հետզհետէ դժուարանում է։

Ս. Նազարեան

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

Պետերբուրգ, 29 հոկտ.

Նախագահը յայտնում է, որ առաջարկութիւն է եղել մօտակայ օրակարգում մուծել՝ ընտրութիւն մի մասնաժողովի, որ քննէ քաղաքացիական իրաւահաւասարութեան հարցին վերաբերող խնդիրները։

Շինգարեվը, պաշտպանելով առաջարկութիւնը, մատնանշում է, որ քաղաքացիների իրաւունքների անհաւասարութիւնը մեծ վնաս է պատճառում պետական օրգանիզմին։ Պետական կեանքի բոլոր շրջաններից չը կայ այնպիսին, որ վարակված չը լինի քաղաքացիական անիրաւահաւասարութեան թոյնով. ժողովրդական կրթութեան շրջանում Ռուսաստանը հանդիսանում է միակ երկիրը, որի մէջ գոյութիւն ունեն կրօնական սահմանափակումներ, տնտեսական կեանքը տուժում է մեծապէս զբաղմունքների ազատ ընտրութեան և տեղափոխվելու ազատութեան շրջանում գոյութիւն ունեցող սահմանափակումներից, վարչական կառավարութեան շրջանում ազգային սահմանափակումները անբարոյականացնում են տեղական իշխանաւորներին, քաղաքական կեանքը այլասերվել է, որովհետև հոկտ. 17-ի մանիֆեստի հիմունքների իրագործումը անհնարին է, եթէ բոլոր քաղաքացիք հաւասար չը լինեն օրէնքի առաջ. կրօնական շրջանում ազգութիւնների անհաւասարութիւնը անդրադարձել է վերջերս տեղի ունեցած սուրբ գրութիւնները յանուն քաղաքական մոլեռանդութեան վարկաբեկելու փորձերով. ռուսական դատարանի անսասանութեանը վտանգ է սպառնում։ Չէ կարելի յետաձգել մի հարցի մշակութիւնը, որի հետ կապված են պետական կեանքի բոլոր շրջանները։ Անհրաժեշտ է ոչնչացնել արդի ազգային սահմանափակումները. այդ պահանջում է տէրութեան արժանապատւութիւնը, ռուս ժողովրդի համամարդկային արժանաւորութիւնը։ Թող օրէնսգէտների խելացիութիւնը փրկէ Ռուսաստանը քաղաքացիական անիրաւահաւասարութեան ամօթից։

Փրիդմանը սկսում է խօսել Բէյլիսի գործի մասին։ Նախագահը խնդրում է չը շօշափել Բէյլիսի գործը, որովհետև այդ գործը դեռ բոլոր ինստանցիաները չէ անցել։ Ֆրիդմանը շարունակում է Բէյլիսի գործի մասին։ Նախագահը նախազգուշացնում է, որ կը զրկէ խօսքից։ Ֆրիդմանը հանում է գրպանից մի յայտարարութիւն Բէյլիսի գործի մասին և սկսում է կարդալ։ Նախագահը զրկում է Ֆրիդմանին խօսքից։

Րօդիչևը կարծում է, որ առանց հրէաների իրաւահաւասարութեան չէ կարելի գործադրել իրաւական կազմը։ Ռուսաստանը բաժանված է ոչ միայն ազգութիւնների, այլ և ըստ դասակարգերի և դասերի։ Գիւղացիութիւնը գիտակցում է իր իրաւազուրկ դրութիւնը ծայրերկիրներում, ազգաբնակութիւնը կրթվում է ատելութեամբ առ Ռուսաստանը 1905 թ. հաստուցումն էր իրաւահաւասարութեան ոտնահարման համար։ Այժմ մենք ընթանում ենք միևնոյն ճանապարհով, որ մի անգամ արդէն հասաւ Ցուսիմային։ Դեռ ժամանակ կայ մտածելու։

Պուրիշկևիչի և Մարկով 2-ի ճառերից յետոյ 152 ձայնով ընդդէմ 92-ի սահմանադիր-ռամկավարների առաջարկութիւնը մերժվում է։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Հոկտեմբերի 28-ին, Թիֆլիսի քաղաքային դումայի նիստում, սկզբին նախագահող իշխ. Ալ. Մ. Արղութեան-Երկայնաբազուկը հաղորդեց Ալ. Քալանթարի մահը և յայտնեց, որ քաղ. վարչութիւնը ամբողջ կազմով ներկայ գտնվեց հանգուցեալ Ալէքսանդր Քալանթարի թաղմանը, իսկ ինքը իբրև քաղաքագլխի պաշտօնակատար խօսեց դամբանական՝ թաղման օրը Քալանթարի հասարակական գործունէութեան և իբրև նախկին ձայնաւորի մասին։ Դուման հաւանութիւն տուեց վարչութեան բոլոր գործողութիւններին և յոտնկայս յարգեց հանգուցեալի յիշատակը։

◆ Ալ. Քալանթարի մահով երկրագործութեան դեպարտամենտի աւագ կենդանաբանի պարտականութիւնները յանձնված են Ա. Թամամշեանին։

◆ Սենատոր Վասացին հրաժարվեց Ռուսաց Կայսերական Աշխարհագրական Ընկերութեան կովկասեան բաժանմունքի նախագահի պաշտօնից։

◆ Մեզ տեղեկացնում են, որ Ս. Զաւարեանի մարմինը Թիֆլիս կը հասնի շաբաթ, նոյեմբերի 2-ին, առ. 8 ժամ 40 րոպէին։

◆ Հոկտեմբերի 29-ին Թիֆլիս վերադարձաւ երկրագործութեան գլխաւոր կառավարչի կովկասեան լիազոր Շաշկովսկին։

◆ Մի խումբ ձայնաւորներ առաջարկութիւն են ներկայացրել արտաքսելու դումայի 7 նիստից ձայնաւոր Սուլաբէրիձէին՝ նախագահի հասցէին վիրաւորական դարձուածք գործ ածելուն համար։

◆ Թիֆլիսի դուման վճռել է պատասխանատւութեան ենթարկել քաղաքային իւրիսկօնսուլտի նախկին օգնական Գ. Քանանեանին՝ քաղաքային դրամները վատնելու համար։ («Կ.»)

◆ Շուտով փոխվելու է Թիֆլիսում հացի սակագինը, որովհետև տեղեկութիւններից երևում է, որ ալիւրի գները պակասել են։

◆ Թիֆլիսի քաղաքային վարչութեան անդամ իշխ. Ն. Ե. Արղութեան-Երկայնաբազուկը շաբաթը 2 անգամ այցելում է առևտրա-տնտեսական վերահսկիչների գրասենեակները և ծանօթանում է անձամբ նրանց գործունէութեան հետ։

◆ Տիկին Սաթենիկ Լաշքարեան խնդրամատոյց է եղել նահանգապետին, որ իրան թոյլ տրվի հրատարակելու Թիֆլիսում գրական երգիծաբանական պատկերազարդ շաբաթաթերթ «Մախլաս» անունով։

◆ Այսօր Թիֆլիս է գալու դասախօս Կօլլօվսկին մի քանի դասախօսութիւններ կարդալու համար։

◆ «Шушинская жизнь» թերթը հաղորդում է, որ հոկտեմբերի 20-ին, Շուշու թեմական դպրոցում կայացել է Շուշու թեմի ընտրողների ժողովը, նախագահութեամբ Զաւէն վարդապետի։ Ընտրողների թիւն եղել է 20։ Ժողովը ընտրել է թեմական դպրոցի համար 6 հոգաբարձուներ հետևեալ անձանց. Դաւիթ Աւան-Իւզբաշեանին (խան Աղնախի) և Արշակ Ղուկասեանին միաձայն, և փակ քուէարկութեամբ, ձայների մեծամասնութեամբ, Ս. Սարուխանեանին, բժ. Համբարձումեանին, Լ. Վարագեանին և Գ. Մելիք-Շահնազարեանին։

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Պետերբուրգում, Մոսկվայում և այլ հայաբնակ քաղաքներում կատարվեցին հոգեհանգիստներ Քալանթարի և Խատիսեանի յիշատակին։

◆ Պետերբուրգի հոգեբանների միութիւնը Բէյլիսի գործի առիթով պրոֆ. Սիկօրսկիի տուած եզրակացութիւնները ճանաչեց կեղծ-գիտական ու քրէական դատավարութեանը ներհակ։

◆ Պետերբուրգում աջակողմեաններն լուրեր են տարածում Պետական Դումայի արձակման և Կոկօվցէվի տեղ Գորեմիկինին նշանակելու մասին։

◆ Պետերբուրգից հեռագրում են, որ սենատոր Վասացիի հետ Պետական Խորհրդի անդամ է նշանակվում նաև փոխարքայի զինւորական մասի օգնական գեներալ Շատիլովը։

◆ Ծանր տկար է Պետական Խորհրդի նախագահ Ակիմովը։

◆ Հանգուցեալ Դէդիւլինի փոխարէն պալատական կոմէնդանտի պաշտօնը յանձնվելու է ներքին գործերի մինիստրի օգնական Ջունկովսկիին։

◆ Լուրերի համաձայն՝ նոր պատերազմ է սկսվելու գարնանը Թիւրքիայի և Բօլգարիայի միջև։

◆ Թիւրքիան, երես առած եւրոպեան դաշնակցութեան խրախուսանքից, ռազմի ու անհաշտ դիրք է բռնել Յունաստանի վերաբերութեամբ, վճռելով յիշեալ դաշնակցութեան օգնութեամբ յետ խլել բոլոր կորցրած երկիրները։ Ռուսաստանը և Ֆրանսիան իրանց դեսպանների միջոցով առաջարկել են Բ. Դրանը խոհեմ լինել։

Խմբագիր-հրատարակիչ՝
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

№ 4711
ՎԱՐԴԻ ԲԻՒՐԵՂԵԱՅ ՍԱՊՈՆԸ
Գործ են ածում ամենքը, որոնք գիտեն գնահատել գեղեցկութիւնը։

Միակ գործարանատէր
ՖԵՐԴ. ՄՈՒԼՀԷՆՍ
Պարֆիւմէրիա
№ 4711.
Կեօլն. Ռիգա.
հիմն. 1792 թ.

Շնորհիւ իր մէջ պարունակող մեծ քանակութեան գլիցերինի, «№ 4711 վարդի բիւրեղեայ սապօնը» կանոնաւոր գործադրողները պարտական են նրան իրանց՝ պատանեկան հասակին յատուկ՝ երեսի գոյնով, թաւշի նման կակուղ, մաքուր և քնքոյշ կաշւով, որոնք իսկական գեղեցկութեան նշանաբանն են կազմում։

Զարմանալի կակուղ փրփուր։ Հիանալի հոտ։ Մեծ տնտեսութիւն։ Իսկականը միայն բոլոր պետութիւն. յայտարար. «№ 4711» մարկայով։

(M. 358723) 9—3

№ 4711
PARFUMERIE
F. MÜLHENS
Կտորի գինը
25 կոպ.

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բժշկ. Բ. Նաւասարդեանի
Հիմնված 1880 թ.
(Գոլովին, Վորոնցովի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
«606»-ի եւ «914»-ի ներարկում բժշկական խորհրդակցութեամբ՝ 11—12 ժ.
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան վեներական (սիֆիլիս) հիւանդութիւն։
Բ. Գ. ՕՂԱՍԱՐԵԱՆ—1—2 ժ. ներքին և երեխաների հիւանդութ.։
Կ. Մ. ՉԻԿՕՎԱՆԻ—9½—10 ք ժ. աչքի, ներքին և նեարդային հիւ.
Զ. Ի ԲԱԲԱՆԱՍԵԱՆ—10—11 ժ. մանկաբարձութիւն, կանանց և երեխայոց հիւ.։
Ն. Տ. ՄՈՒԼԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւանդութ.։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներական, վիրաբուժութեան և միզասեռ. հիւ.։
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—12—1 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.։
Կ. Գ. ԳՈՒՐԳԵՆԻՁԷ—1—2 ժ. ներքին, երեխայոց հ. և ծաղկահատ։ Երեան, մէզի, խուխի հետազօտութիւն։
ԿԻՆ-ԲԺԻՇԿ ՏԷՐ-ԳԱՒԹԵԱՆ—12—1 ժ. մանկաբարձութիւն և կանանց հիւ.։
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—6—7 ժ.։
Կ. Գ. ԳՈՒՐԳԵՆԻՁԷ—6—7 ժ.
Վճարը 50 կ.։ Չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան
1. 0—99

Լոյս տեսաւ
„АРМЯНО-ГРИГОРІАНСКІЙ КАЛЕНДАРЬ“
на 1914 годъ ◆ Цѣна 20 коп.
Դիմել՝ Ставрополь губ. Священнику Сааку Теръ-Ованнесьянцъ.
(ա.օ.) 942. 10—7

Ա. ԿԻՎԻՏ
Պատրաստում է ՀԱՍՈՒՆՈՒԹԵԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԻ համար, նոյնպէս և զինւորական ու միջնակարգ բոլոր դպրոցները մտնելու, նաև I կարգի կամաւոր զինւոր պատրաստվելու համար։ Ըստ ցանկութեան՝ Ա. Կիվիտ վերցնում է իր վրա ամբողջ պատասխանատւութիւնը քննութիւնների աջողութեան վերաբերմամբ։ Ընդունելութիւնը ցեր. ժամը 12—1-ը և երեկ. ժամը 5—6-ը։ Ելիզավէտինսկայա փող. № 142 (անկիւն Պիրադովի փող.)։
(ա. օ.) 972. 10—1

Չափահասների համար
ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ
Բժշկ. ֆէլդշէր Ա. Գ. ԵՍԱՅԵԱՆԻ
1) «Գաղտնի հիւանդութիւնների բժշկարան» (կանանց և տղամարդկանց վեներական և այլ ցաւեր), բազմաթիւ րեցեպտներով, խորհուրդներով և նկարներով։ Անհրաժեշտ բժշկարան է ամեն մի չափահաս մարդու համար, նամանաւանդ այնտեղ, որտեղ չը կան մասնագէտ բժիշկներ։ Լեզուն շատ պարզ ու ամենքին հասկանալի։ Գինն է 50 կ.։
2) «Տրիպէր (սուսանակ) եւ նրա բժշկութիւնը» րեցեպտներով, բազմաթիւ խորհուրդներով ու նկարներով։ Գինն է 20 կ.։
3) «Ներկարմոսի շալվար կամ մօդնի իւբկէն», խիստ ծիծաղաշարժ վօդեվիլ միմիայն չափահասների համար։ Գինը 20 կ.։
4) «Սօնայի ճօռնդրէքը» յայտնի վօդեվիլը, շատ ծիծաղաշարժ 2-րդ հրատարակութիւն։ Գինը 15 կ
5) «Ջիւնոյն դագաղում», պատմուածք հայ-թուրքական կռիւներից. գլխաւոր նկարներով Գինը 7 կ.։
6) «Րաֆֆիի կենսագրութիւնը», պատկերով։ Ամենքին հասկանալի գրված։ Գինը 10 կ.։
Ուղարկում եմ բոլոր գրքերը միասին։ Պահանջողները պէտք է առաջուց գրկեն գրքերի գինը մարկաներով ճանապարհածախքը՝ բոլոր գրքերը միասին—17 կոպ. (Ընպայման՝ զակազնոյ)։ Հասցէն՝ Тифлисъ, Семеновская ул. № 9. Медицинскому фельдшеру А. Г Есаянцу.
(Հ. կ.) 44. 100—63

Մատակար. Կովկ. Օֆիցէր. Տնտես. Ընկ.
ՊԱՐՍԿԱԿԱՆ ԵՒ ԿՈՎԿԱՍԵԱՆ ԽԱՆՈՒԹ
Դ. Գ. ԱՄԻՆՏԱԵՎԻ
Թիֆլիս, Կիրօչնայա փող. № 19. Տելէֆօն № 15—82.
ԽՈՇՈՐ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ԸՆՏԻՐ
ամեն տեսակ գորգեր, փալասներ, կարպետներ, պարսկ. զանազան մետաքսեայ վերմակներ, բաշլիղներ և կտորեղէններ, կովկասեան խաֆիջներ, կօշկեղէն, արծաթեղէն, ճանապարհորդ. առարկաներ, գդալներ, բաշլըղներ, ասիական շալեր, անտիկ առարկաներ և այլն։ Գնում ենք հին գորգեր կամ փոխարինում նրանց նորերով։
ԳՆԵՐԸ ՉԱՓԱՒՈՐ ԵՆ
Ֆիրման գոյութիւն ունի 1870 թւից։ Պահեստը Զուբալովի քարվանսարայում։
(Ե.Տ.Կ.) 941. 10—5

ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ ԿՈՎԿԱՍԻ ՓՈԽԱՐՔԱՅԻ
ԴԻՒԱՆԱՏԱՆ ՏՊԱՐԱՆԸ
(ԼՕՐԻՍ-ՄԵԼԻՔՕՎՍԿԱՅԱ ՓՈՂՈՑ, ԱՐՔՈՒՆԱԿԱՆ ՏՈՒՆ)
կատարում է ամեն տեսակ տպարանական աշխատանքներ, այն է՝ տպագրում է լրագիրներ եւ ամսագիրներ, գրքեր, բրօշիւրներ, բլանկներ, աֆիշաներ, ծրագիրներ, հարսանեկան հրաւիրատոմսեր, այցեքարտեր եւ այլն։
Ընդունվում են տպագրական պատուէրներ հետևեալ լեզուներով՝ ռուսերէն, հայերէն, վրացերէն, թուրքերէն, ֆրանսերէն, գերմաներէն, արխազերէն լեռնականների բարբառով։
Պատուէրները կատարվում են մաքուր, ճշտօրէն և չափաւոր գներով։ Ընդունվում են նաև շուտափոյթ կատարվելիք պատուէրներ առանձին պայմաններով։
Պատուիրողների ցանկութեան համաձայն, տպարանը պատուէրները կարող է կազմել տալ, կամ բրօշիւրներ շինել, ու այնուհետև յանձնել։
ԿԱՆ ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ԶԱՆԱԶԱՆ ՏԵՍԱԿ ԹՂԹԵՐ ՊՐԷՅՍ-ԿՈՒՐԱՆՏԻ ԳՆԵՐՈՎ։
Տելէֆօն № 67.

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ Лорисъ-Меликовская улица, домъ казенный